Ազգ
Azg
13 ՆՈՅԵՄԲԵՐ 2010 ՇԱԲԱԹ 209 (4589)
ISSN: 1829-1651

# «Կայուն, բայց լարված». Մինսկի խմբի տարեկան զեկույցը

ԵԱՀԿ-ի մշտական խորհրդի նոյեմբերի 11-ին Վիեննայում կայացած նիստի ժամանակ Մինսկի խմբի համանախագահները եւ ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկը հանդես են եկել տարեկան զեկույցով: Ռոբերտ Բրադկեն, Բեռնար Ֆասիեն եւ Իգոր Պոպովը հաշվետվություն են ներկայացրել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ նախորդ տարվա նոյեմբերից սկսած բանակցությունների ու հանդիպումների վերաբերյալ: Անջեյ Կասպրշիկը հայտարարել է, որ շփման գծում վերոնշյալ ժամանակահատվածում «իրավիճակը եղել է կայուն, բայց լարված»: Այդ առումով Կասպրշիկը կարեւորել է Աստրախանում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների ընդունած հռչակագիրը: Նիստին ներկա հայկական եւ ադրբեջանական պատվիրակություններն իրենց հերթին ելույթներ են ունեցել:

Հ. Ա.

# «Եհովայի վկաները» հրաժարվում են իրենց տականքից

## *Ձեռնպահության մի կոչ էլ արել է մարդու իրավունքների մեր «խրոխտ» պաշտպանը*

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Սեւան քաղաքում «Եհովայի վկաներ» աղանդավորական կազմակերպության անդամ Արման Թորոսյանի կողմից իր ծնողների դաժան սպանությունը այս կազմակերպության թողած արյունոտ հետքերից առաջինն ու, ցավոք, վերջինը չէ: Կարելի է միայն ենթադրել, թե ուղեղների լվացման կամ ինչպես իրենք են ասում՝ «մշակման» ի՞նչ ճանապարհ են անցնում այդ կազմակերպությունում, որ պատրաստ են սպանել անգամ ծնողներին, եթե նրանք փորձեն հետ պահել իրենց զավակին կործանարար ճանապարհից: Տեղի ունեցածն իսկապես ահասարսուռ էր, եւ Հայաստանի ողջ բնակչությունը ցնցված էր: Ամբողջ բնակչությունը, բացառությամբ «Եհովայի վկաների» կազմակերպության ղեկավարների ու նրանց ցանցը ընկած զոմբիների, որոնք, ինչպես ակնկալում էին նրանց գործելակերպին մոտիկից ծանոթները, անմիջապես հերքեցին սպանված երիտասարդի պատկանելությունը «Եհովայի վկաներին»:

«**Ազգի**» խմբագրությունը երեկ ստացավ Հայաստանում «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության հայտարարությունը: Նշելով, որ իրենք եւս ցնցված են այդ «սարսափելի» հանցագործությունից, վերոնշյալ կազմակերպությունը հերքում է Արման Թորոսյանի պատկանելությունը եւ անգամ որեւէ առնչությունը «Եհովայի վկաների» հետ, «բացարձակ անհիմն եւ սուտ տեղեկություններ տարածելու», «անպատասխանատու», «ոչ պրոֆեսիոնալ» մոտեցման մեջ մեղադրելով Հայաստանի լրատվամիջոցներին: Ինչը, ըստ նրանց, «արատավորում է ամբողջ աշխարհի «Եհովայի վկաների» բարի անունը, պատիվը եւ արժանապատվությունը»: Ըստ այդ հայտարարության, պարզվում է, որ «Եհովայի վկաները» հայտնի են որպես ծնողների եւ մերձավորի նկատմամբ խոր հարգանք տածող մարդիկ, ովքեր կյանքը թանկ են գնահատում»:

*Տես էջ 2*

**ՍԵՈՒԼ**

# Էրդողանը առանձնազրույց է ունեցել Օբամայի եւ Մեդվեդեւի հետ

Հարավային Կորեայի մայրաքաղաք Սեուլում ընթացող G-20-ի երկրների ղեկավարների գագաթաժողովի շրջանակներում Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը երեկ հանդիպել է ԱՄՆ նախագահ Օբամային: Հանդիպման ընթացքում, որը տեւել է 30 րոպե, ռազմավարական դաշնակիցները հասցրել են քննարկել հարցեր՝ կապված Թուրքիայում ամերիկյան հակահրթիռային համակարգերի տեղադրման հետ: «ԱՄՆ նախագահին փոխանցել եմ այս հարցում Թուրքիայի զգայունակությունը: Պետք է նշեմ, որ պարոն Օբաման մեր պահանջներին դրական է վերաբերվել», հանդիպումից հետո նշել է Էրդողանը՝ ընդգծելով, որ այս հարցում «Թուրքիան դեռ վերջնական որոշում չունի»: Հիշեցնենք, որ, ըստ թուրքական աղբյուրների, Անկարան պահանջել էր որոշ երաշխիքներ Վաշինգտոնից, սեփական երկրում հակահրթիռային համակարգերի տեղադրման հետ կապված: Մասնավորապես նշվում էր, որ Թուրքիան պահանջել էր, որ հետախուզական սարքերի միջոցով ստացված տվյալները չհաղորդվեն Իսրայելին, ինչպես նաեւ Իրանը հանվի վտանգ ներկայացնող երկրների ցանկից: Եվ եթե Բարաք Օբաման իրոք համաձայնել է հատկապես այս վերջին թուրքական պայմանին, ապա առաջանում է տրամաբանական հարց. այդ պարագայում հիմնականում ո՞ւմ դեմ են տեղադրվելու ամերիկյան հակահրթիռային համակարգերը թուրքական հողում: Հիշեցնենք նաեւ, որ որոշ թուրքական լրատվամիջոցներ պնդում էին, որ եթե Անկարան չտա իր համաձայնությունը համակարգերի տեղադրման հետ կապված, ապա Վաշինգտոնը «մեծ հաճույքով» կընդունի Հայոց ցեղասպանությունը:

Սեուլում Էրդողանը առանձին հանդիպել է նաեւ Ռուսաստանի նախագահ Մեդվեդեւի հետ: Այս հանդիպման մանրամասները դեռեւս չեն հրապարակվում. հայտնի է միայն, որ այստեղ քննարկվել են «երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր», ինչպես նաեւ՝ որ թուրք-ամերիկյանի պես, տեւել է 30 րոպե:

Հ. Ա.

# Հանձնաժողովը կապահովի զորակոչի թափանցիկությունը

Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հրամանով այս տարվա աշնանային զորակոչի անցկացման թափանցիկության եւ օրինականության ապահովման, զորակոչի ընթացքում քաղաքացիների դիմումները եւ բողոքները քննարկելու, դրանց լուծում տալու համար ստեղծվել է հանձնաժողով, որը կնախագահի նախարարի խորհրդական Գեղամ Հարությունյանը:

Զորակոչի ընթացքում՝ յուրաքանչյուր չորեքշաբթի եւ շաբաթ օրերին, Մոսկովյան 5 հասցեում ժամը 12-ից 16-ի սահմաններում հանձնաժողովի աշխատակիցները կընդունեն քաղաքացիների դիմումներն ու բողոքները, զորակոչի վերաբերյալ:

Հ. Հ.

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Լրացել է «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպության 10-ամյակը: Միության հոբելյանը լայնորեն նշվել է Ռուսաստանի տարածաշրջաններում, ինչպես նաեւ՝ Հայաստանում:**

**Ընթացիկ տարվա նոյեմբերի 17-ին, ժամը 10.00-ին Մոսկվայի «Պրեզիդենտ-հոթելի» դահլիճում տեղի կունենա կազմակերպության հերթական՝ 4-րդ համագումարը, իսկ նույն օրը, ժամը 19.00-ին, Պետական Կրեմլյան պալատում տեղի կունենա հանդիսավոր երեկո եւ տոնական համերգ՝ նվիրված Ռուսաստանի հայերի միության 10-ամյա հոբելյանին:**

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ
ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# Ֆաթուլաեւը նաեւ «թմրանյութեր է պահել»

Երեկ «**Ազգը**», մեջբերելով «Նովոստի Ազերբայջան» գործակալությանը, տեղեկացրեց, որ Ադրբեջանի գերագույն դատարանը Մարդու իրավունքների դատարանի որոշմամբ վերանայել է «Ռեալնի Ազերբայջան» («Իրական Ադրբեջան») թերթի խմբագիր Էյնուլա Ֆաթուլաեւի գործը, եւ լրագրողը պետք է ազատ արձակվեր՝ համաձայն ՄԻԵԴ-ի պահանջի: Սակայն պարզվում է, որ Ֆաթուլաեւը նաեւ թմրանյութեր է պահել իր մոտ, իսկ այս մեղադրանքը ամենեւին էլ չի հանվել լրագրողից: Այնպես որ «Իրական Ադրբեջան»-ի խմբագիրը կշարունակի մնալ բանտում՝ դատապարտված լինելով «թմրանյութեր պահելու» մեղադրանքով:

Հ. Ա.

# Արսեն Քարամյանին պատանդ չեն պահել

«**Ազգը**» երեկ ներկայացրել էր «Սարդարապատ» շարժման հայտարարությունը, ուր խոսվում էր այն մասին, որ մեր փոխնախարարի այցին Վրաստանի իշխանությունները խոչընդոտել են:

Հայաստանի սպորտի եւ երիտասարդության փոխնախարար **Արսեն Քարամյանը** հերքել է նախորդին «Սարդարապատ» շարժման տարածած հայտարարությունը, որ Վրաստանի իշխանություններն իրեն թույլ չեն տվել այցելել Ախալքալաք ու մասնակցել «Ոսկե աշուն»-ի միջոցառումներին: Հերքում-հայտարարության մեջ ասվում է, թե Ջավախքում Քարամյանը մասնակցել է նախատեսված բոլոր միջոցառումներին, Թբիլիսիում օգտակար հանդիպումներ ունեցել վրացի գործընկերների հետ, որոնց անդրադարձել են հայկական հեռուստաընկերությունները: Քարամյանը ձեռնպահ է մնացել «Սարդարապատի» հայտարարության շարժառիթները մեկնաբանելուց:

Ս. Խ.




# Վերահսկիչ պալատը ԿԸՀ-ում էլ է խախտումներ հայտնաբերել

Վերահսկիչ պալատը 2008-2009 թվականներին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ պետբյուջեից հատկացված միջոցների օգտագործումը վերահսկելով եզրակացրել է, որ 2008 թ. հանրապետության մարզերում դասընթացներ կազմակերպելու նպատակով գործուղված ԿԸՀ-ի աշխատակիցներին ավելի է վճարվել 1,170.0 հազ. դրամ՝ գիշերավարձի եւ 947.5 հազ. դրամ ճանապարհածախսի գումար, ընդամենը 2,117.5 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե: 2009-ին կատարված հիմնական միջոցների գույքագրմամբ արձանագրվել են տարբեր ծրագրերով ձեռք բերված հիմնական միջոցներ՝ 79,423.3 հազ. դրամ ընդհանուր արժեքով, ինչպես նաեւ ՀՀ կառավարության 16.07.2009 թ. թիվ 805-Ա որոշմամբ ԿԸՀ-ին են ամրացվել 2,852.3 հազ. դրամ արժողությամբ հիմնական միջոցներ, որոնք սակայն հաշվապահական ձեւակերպում չեն ստացել եւ հաշվեկշռում չեն արտացոլվել: 2009 թ. նկարահանված 5,628.0 հազ. դրամ արժողությամբ ուսուցողական ֆիլմը որպես նյութական արժեք հաշվապահական ձեւակերպում չի ստացել եւ հաշվեկշռում չի արտացոլվել: ԿԸՀ-ի կողմից չեն հաշվառվել եւ հաշվեկշռում չեն արտացոլվել՝ ավտոմեքենաների վառելիքի եւ տպագրական թղթի մնացորդները, այլ կազմակերպությունների հետ դեբիտորական եւ կրեդիտորական պարտքերը: ՀՀ ԿԸՀ-ի գլխավոր աուդիտորը միաժամանակ զբաղեցնում է նաեւ աշխատակազմի ղեկավարի տեղակալի պաշտոնը: 2008-2009 թթ.-ի ընթացքում ԿԸՀ-ն խախտել է «ՀՀ գնումների մասին օրենք»-ի պահանջները: Վերահսկիչ պալատն այս ուսումնասիրությունների արդյունքում մի շարք առաջարկներ է արել ԿԸՀ-ին, այդ թվում՝ ավել վճարված գործուղման գումարները (2,117.5 հազ. դրամ ) բյուջե վերականգնելու ուղղությամբ:

ՀԻՇԵՑՈՒՄ

ԱՊՊԱ պայմանագրեր ձեռք բերելու
ժամկետի ավարտին մնացել է 48 օր:

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ»
ապահովագրական ընկերությունը կատարում է պայմանագրերի ձեւակերպում:

- ՀՀ, ք. Երեւան, Տպագրիչների 8
- ՀՀ, ք. Երեւան, Դեմիրճյան 38
- ՀՀ, ք. Երեւան, Վ. Սարգսյան 20 հասցեներով:
- www. ingoarmenia.am կայքում
- 010-54-74-05 թեժ գծով:

Ինչպես նաեւ առաքում:

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ»
Մենք վճարում ենք: Մի՛շտ*

* համաձայն ապահովագրության պայմանագրի եւ պայմանների:

# «Նիկոլ Փաշինյանին ստիպում են լռել»

## *Ընդդիմության պիկետն ու գերատեսչությունների պարզաբանումները*

ՀԱԿ-ի նախաձեռնությամբ Նիկոլ Փաշինյանին նվիրված պիկետը սկսվեց ժամը երկուսին: Գլխավոր դատախազության մուտքի մոտ հավաքված շուրջ 200 ցուցարարներ պահանջում էին ազատ արձակել «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանին:

Երբ ոստիկաններն արգելեցին ցուցարարներից Վարդգես Գասպարիին պառկել դատախազության շենքի առաջ, սկսվեց հրմշտոց: Ոստիկանները սկսեցին ցուցարարներին հրել՝ արգելելով մոտենալ դատախազության շենքին, ցուցարարներն էլ իրենց հերթին սկսեցին նրանց հրել ու հայհոյել: Շուրջ 10 րոպե Վազգեն Սարգսյան փողոցում երթեւեկությունը կանգնած էր, որովհետեւ ցուցարարներն ու ոստիկանները հարցերը պարզաբանում էին հենց փողոցի մեջտեղում:

Այնուհետեւ ոստիկանների եւ ՀԱԿ-ի համակարգող Լեւոն Զուրաբյանի միջեւ տեղի ունեցած զրույցից հետո ցուցարարները բողոքի ակցիան անցկացրին դատախազության շենքի դիմացի մայթին՝ չխանգարելով երթեւեկությանը:



ՖՈՏՈԼՈՒՐ

«Փաշինյանի հետ իշխանությունները այսպես են վարվում, որովհետեւ նրա խմբագրած «Հայկական ժամանակ» օրաթերթն ամեն օր որեւէ բացահայտում է հրապարակում ներկա իշխանությունների կատարած հանցագործությունների մասին: Դրա համար էլ նրանք վախենում են: Իշխանությունները կարծում էին, որ Փաշինյանը կվախենա եւ ներման խնդրագիր կստորագրի, սակայն նա դա չի անում, ինչն ավելի է զայրացնում ներկա ռեժիմին: Նրանց նպատակն է լռեցնել Փաշինյանին եւ «Հայկական ժամանակը», «**Ազգ**»-ին ասաց **Զուրաբյանը**՝ հավելելով, որ իրենք պահանջում են անկախ դատաբժշկական փորձաքննություն անցկացնել միջազգային Կարմիր խաչ կազմակերպության բժիշկների մասնակցությամբ:

Հիշեցնենք, որ նախօրեին հաղորդագրություն էր տարածվել, որ Կոշ ՔԿՀ-ում երկու դիմակավոր անձինք առավոտյան ժամը 4-ի սահմաններում հարձակվել են Նիկոլ Փաշինյանի վրա եւ բռնություն կիրառել:

ՄԻՊ գրասենյակի տարածած հաղորդագրության համաձայն՝ նոյեմբերի 11-ին՝ առավոտյան ժամը 3 անց 54 րոպեի սահմաններում, զանգահարել է Փաշինյանի կինն ու ասել, որ ամուսնու վրա հարձակվել են դիմակավորված անձինք: Աննա Փաշինյանը չի ցանկացել Արմեն Հարությունյանին ասել, թե ով է իրեն այդ տեղեկատվությունը տրամադրել:

Երեկ ՄԻՊ գրասենյակից «**Ազգ**»-ին հայտնեցին, որ Կոշ ՔԿՀ-ում շարունակվում է քննությունը: «Եթե Փաշինյանը համաձայն չէ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի դատաբժշկական փորձաքննության տվյալների արդյունքներին, ապա ՄԻՊ-ը պատրաստ է վերջինիս օգնել այլ փորձաքննություն անցկացնելու հարցում», ասացին նրանք:

Լեւոն Զուրաբյանը մեղադրեց նաեւ արդարադատության նախարարությանը, որը նախօրեին հայտարարություն էր տարածել՝ հերքելով Փաշինյանի փաստաբանի տարածած հայտարարությունը: «Դեռ ոչինչ հայտնի չէր, որեւէ մանրամասն գործի վերաբերյալ չկար, սակայն նախարարությունն արդեն հերքում էր: Նրանց հայտարարությունն ուղղակի զավեշտալի է»:

Երեկ երեկոյան ստացանք նաեւ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության հասարակայնության հետ կապերի բաժանմունքի պետ **Արսեն Բաբայանի** պարզաբանումները:

«Փաշինյանի՝ իր նկատմամբ բռնություն կատարելու վերաբերյալ հայտարարության հերքմանը դիմել ենք այն ժամանակ, երբ նյութերը եղել են բավարար՝ նման որոշում կայացնելու համար: Քննության հիմնական փուլին մասնակցել են նաեւ հասարակական դիտորդները, որոնք ուսումնասիրության արդյունքներով արդարադատության նախարարին որեւէ հրատապ հաշվետվություն չեն ներկայացրել, ինչը պատադիր արվում է, երբ հասարակական դիտորդները հայտնաբերում են իրավախախտումներ»:

Փաշինյանի փաստաբանը հայտարարություն էր տարածել, որ դատապարտյալին պատկանող ծածկոցին եղել են «սապոգի» ակնհայտ հետքեր, իսկ հակառակ կողմում՝ արյան նմանվող բծեր:

«Դատաբժշկական փորձաքննությամբ մեկ անգամ եւս հերքվել է որեւէ եղանակով մարմնական վնասվածք պատճառելու հանգամանքը, իսկ զննությամբ՝ ծածկոցին սապոգի հետքեր չեն հայտնաբերվել: Ներկայումս աշխատակիցները, այդ թվում՝ «սպեցնազի», այդպիսի կոշիկներ չեն կրում: ՔԿՀ-ի ղեկավարությունը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները յուրաքանչյուր դատապարտյալի անվտանգությունն ապահովելու համար»:

Հայ ազգային կոնգրեսն էլ հայտարարել է, որ շարունակելու է պայքարել Նիկոլ Փաշինյանի ազատության համար: «Այսպիսի սադրանքներով նրանք դատաստան են տեսնում Փաշինյանի նկատմամբ», ասաց ՀՀՇ վարչության նախագահ **Արամ Մանուկյանը**:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Եհովայի վկաները» հրաժարվում են իրենց սականից

*1-ին էջից*

Անհնար է խոսքեր գտնել այս հայտարարության մեջ խտացված ցինիզմն ու լկտիությունը մեկնաբանելու համար: Նախ՝ լրատվամիջոցները հայտնել են այն, ինչ ասել են մարդասպան դարձած երիտասարդի հարեւանները, մտերիմներն ու ծանոթները: Ի տարբերություն «Եհովայի վկաների», նրանք բոլորը մեկ հրահանգով չեն կարող ստել: Հետեւաբար, եհովականների հայտարարության տեքստով «հարձակումը որպես լավագույն պաշտպանություն» տարբերակ այստեղ չի աշխատում: Արեւմուտքում մշակված ագրեսիվ քարոզչության մյուս գոհարը՝ սեփական մեղքերը վերագրել դիմացինին եւ իրականությանը կապ չունեցող երեւույթը ներկայացնել որպես հայտնի ճշմարտություն, եւս արդեն հնացել է: «Եհովայի վկաներն» այնքան «բարի անուն, պատիվ եւ արժանապատվություն» ունեն աշխարհում եւ Հայաստանում, որքան բորենիները բնության մեջ: Իսկ թե քանի՞ երեխա է զոհվել նրանց՝ «Եհովայի վկա» ծնողների կողմից արյան փոխներարկում թույլ չտալու պատճառով, «կյանքը գնահատող» կազմակերպությունը «մոռացել է» հավանաբար:

Այդուհանդերձ, հարց է ծագում, թե ինչո՞ւ այս կազմակերպությունը որոշեց հրապարակային հայտարարությամբ հրաժարվել ծնողներին սպանած սեփական սականից: Պատասխանը պարզ է՝ «Եհովայի վկաներ» կազմակերպությունը կարող է իրավական պատասխանատվություն կրել որպես հանցագործության դրդիչ:

Այս ամենից հետո ուղղակի որպես զավեշտ է հնչում Հայաստանի մարդու իրավունքների «խոոխս» պաշտպան **Արմեն Հարությունյանի** հայտարարությունը՝ քանի դեռ գործը քննվում է, մարդասպան երիտասարդին չանվանել «Եհովայի վկա»: Իսկ գուցե մարդու իրավունքների պաշտպանը կոչ անի նրան նաեւ մարդասպան չանվանել, իսկ գուցե ոչ ոք էլ չի՞ սպանվել, եւ արյուն ու դիակներ ոչ ոք չի՞ տեսել: Մարդու իրավունքների պաշտպանը գոնե մեկ անգամ փորձե՞լ է պաշտպանել այն ծնողների իրավունքները, որոնց զավակներն այլեւս իրենցը չեն, այլ լրացրել են «Եհովայի վկաների» գլխաքանակը եւ նույնը պարտադրում են անել իրենց հարազատներին:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

# «1 միլիոն աստղ» Կարիտասի ծրագիրը Վանաձորի պատանիներին

**Նոյեմբերի 13-ին, ժամը 17-ին գերմանական 64 քաղաքներում միաժամանակ կմեկնարկի «1 միլիոն աստղ» Կարիտասի բարեգործական նախագիծը, որի 4 եվրո արժողության մոմերի վաճառքից ստացված հասույթի մի մասն այս անգամ կուղղվի Վանաձորի մանուկների եւ պատանիների կենտրոնին, մյուս մասը տարածքում ապրող կարիքավորների հոգսերը կթեթեւացնի: Այս տեղեկությունը հայտնում են գերմանական մի շարք լրատվամիջոցներ: Մասնավորապես «Մայն փոստից» իրազեկ ենք դառնում, որ քաղաքների հրապարակներում, շենքերի բակերում Կարիտասի աստղ պատկերող վառվող մոմերով համերաշխության այս նախագիծը երկար տարիներ նույն նպատակն է հետապնդում՝ ուշադրություն սեւեռել Եվրոպայում տիրող աղքատությանը:**

**2 շաբաթ է, ինչ Կարիտասի հայաստանյան գրասենյակի պատասխանատու Անահիտ Մխոյանը եւ սոցիալական աշխատող Գուրգեն Բալասանյանը իրենց՝ 2006 թվականից մեկնարկած Վանաձորի պատանիների հետ վերականգնողական ծրագրի հաջողություն գրանցած փորձն են ներկայացնում գերմանացի գործընկերներին:**

**Հայաստանի բնակչությունը կրթված է (անգրագետները 20 տոկոսից էլ ցածր թիվ են կազմում), բայց 3 միլիոն բնակչության 80 տոկոսը ապրում է աղքատության ստորին շեմը չհաղթահարելով: Աղքատությունը ծնունդ է տալիս հարբեցողության, բռնության եւ քրեածին իրավիճակի: Հաջողակ հեռանկար է ուրվագծում Կարիտասի Վանաձորի կենտրոնում տարվող վերոհիշյալ նախագիծը, որի բյուջեն 139 999 եվրո է կազմում: Սիրո, նվիրվածության, անհատական օգնության, ուսումնական եւ ժամանց կազմակերպելու ծրագրի շնորհիվ հաջողվել է 435 պատանիների ինտեգրել հասարակությանը: Այժմ կենտրոնի խնամքի տակ են 12-22 տարեկան 150 պատանի ու երիտասարդ: Հայաստանի Կարիտասի 75 աշխատակիցներ եւ 70 կամավորներ հաջողությամբ են իրականացնում իրենց առջեւ դրված խնդիրը: Կարիտասի ֆինանսական միջոցների 25-30 տոկոսը գերմանական կողմն է ապահովում:**

Ան. Հ.
Գերմանիա

# Ռազմիկ Զոհրաբյանը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանին

**ՀՀԿ փոխնախագահ Ռազմիկ Զոհրաբյանը, երեկ հանդիպելով լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ, մի շարք հետաքրքրական արտահայտություններ է արել: Նա ասել է, որ ղարաբաղյան կարգավորման ճանապարհային քարտեզ գոյություն չունի, դա Ադրբեջանի հնարածն է, իսկ Աստանայի ԵԱՀԿ գագաթաժողովին հայկական եւ ադրբեջանական կողմերը կկենտրոնանան երեք հիմնական սկզբունքի վրա, ու ամեն ինչ կսկսվի զրոյից՝ հայկական կողմի համար ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչումն ու ուժի չկիրառումը:**

**ԲՀԿ-ական Վարդան Բոստանջյանի՝ ընտրություններին իր կուսակցության 99,99 տոկոս ձգտման մասին ասածին արձագանքեց այսպես. «Աստված չանի ԲՀԿ-ն այդքան ձայն հավաքի»՝ նշելով, որ դա կնշանակեր դիկտատուրա, ընդ որում, աշխարհի ոչ մի կուսակցություն այդքան ձայն հավաքել չի կարող: Նրա կանխատեսմամբ՝ ապագա խորհրդարանում կհայտնվեն ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն, ՀՅԴ-ն, ՀԱԿ-ը, բնականաբար՝ ՀՀԿ-ի մեծամասնությամբ:**

**ՀԱԿ-ի հանրահավաքում Տեր-Պետրոսյանը նախագահ Սարգսյանի ելույթներից մեկն անվանել էր ռասիզմ. «Դա ռասիզմ չէ, այլ առողջ ազգայնական գաղափարախոսություն, որի շնորհիվ, ի դեպ, Նժդեհը ժամանակին փրկեց Լեռնահայաստանը: Դրա շնորհիվ է, որ այսօր ունենք Արցախ, Երեւան: Լեւոն Տեր-Պետրոսյանը դարձել է Ադրբեջանի խոսնակը: Նա իր ելույթում խոսել է այդ մասին, քանի որ դա ադրբեջանական մամուլում լայնորեն արծարծվել էր, որպեսզի մերում էլ արծարծվի, իսկ դրա համար խոսնակ էր պետք, ու այդ խոսնակի դերում հանդես եկավ հենց Լեւոն Տեր-Պետրոսյանը», ասաց Ռ. Զոհրաբյանը:**

Մ. Խ.

# Ի՞նչն է փոխվել որ

**Երեկ ՀԱԿ համակարգող Լեւոն Զուրաբյանը, մեկնաբանելով Տեր-Պետրոսյանի այն արտահայտությունը, թե ինքը նախագահի թեկնածու չի առաջադրվի, եթե չառաջադրվի Ռոբերտ Քոչարյանը (խոսքը արտահերթ նախագահական ընտրությունների մասին է), պարզաբանել է, թե այն ժամանակ նկատի է առնվել այն իրավիճակը, որ երբ Սերժ Սարգսյանը հրաժարական տա, ու Քոչարյանը նախագահի թեկնածու չառաջադրվի, ինքն էլ չի առաջադրվի. «Հիմա շատ բան է փոխվել, բայց մի բանում կարող եք վստահ լինել՝ Տեր-Պետրոսյանը մնում է Հայ ազգային կոնգրեսի անվիճելի առաջնորդը: Եվ եթե նախագահական ընտրություններ լինեն, ես վստահ եմ, որ ինքն էլ լինելու է կոնգրեսի թեկնածուն», ասել է Լ. Զուրաբյանը: Միայն հասկանալի չէ՝ ի՞նչն է փոխվել:** Մ. Խ.

# Վազգեն Խաչիկյանը լքե՞լ է պաշտոնը

**Ըստ շրջանառվող լուրերի՝ սոցիալական ապահովության ծառայության պետ Վազգեն Խաչիկյանը ազատվել է պաշտոնից: Ծառայությունից ոչ հերքում, ոչ հաստատում են լուրը, նշելով միայն, որ Վ. Խաչիկյանն աշխատանքի չի գալիս:**

**Մինչ այդ հայտնի էր դարձել, որ Վերահսկիչ պալատը ստուգումներ է իրականացրել եւ խախտումներ հայտնաբերել ծառայությունում:** Մ. Խ.

# Կարգալույծ է հռչակվել Ղեւոնդ աբեղա Ղեւոնդյանը

**Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Սուրբ Շողակաթ վանքի վանահայր Ղեւոնդ աբեղա Ղեւոնդյանը՝ եկեղեցական ծառայությունից հրաժարվելու խնդրագրի հիման վրա:**

**Կարգալույծ հռչակված հոգեւորականը կդասվի աշխարհականների շարքը եւ կկոչվի ավազանի անունով՝ Արթուր Ղեւոնդյան:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ադրբեջանում ազգային ինքնությունը կառուցվում է հայատյացության վրա

Հայի հանդեպ ատելությունը Ադրբեջանում դարձել է ոչ միայն սովորական, ընդունելի, այլեւ խրախուսելի երեւույթ: Ադրբեջանում կարելի է դառնալ ազգային հերոս ընդամենը մի քանի ակնթարթում. օրինակ՝ քնած տեղը հայ զինվորին սպանելու համար Ռամիլ Սաֆարովին ոչ թե դատապարտում են, այլ հռչակում ազգային հերոս, նրա անունով փողոցներ ու հրապարակներ կոչում, դեռ մի բան էլ պատանիներին ասում, այ տեսնո՞ւմ եք, դուք էլ պետք է նրան նմանվեք:

Ադրբեջանում ազգային ինքնությունը կառուցվում է հայատյացության վրա, որը արտացոլվում է նաեւ ադրբեջանա-թուրքական ֆիլմերում: Դրանք դիտելուց հետո ակնհայտ է դառնում, թե ինչու են այդ երկրում ծնվում մարդասպան սաֆարովներ: Խնդիրն այստեղ հակահայ քաղաքականությունը չէ կամ հայի հանդեպ ատելության սերմանումը, այլ ընդհանրապես կյանքի, մարդկության հանդեպ դաժանությունը, որ պետք է լուրջ անհանգստացնի ադրբեջանցիներին: Չէ՞ որ «ազերի» արտադրության ֆիլմերում կյանքից ու պատմությունից անտեղյակությունից ու զոմբիի կարգավիճակում հայտնված երիտասարդները կանգնում են հոգեբանական լուրջ շեղումների առաջ:

Հայի կերպարը ադրբեջանա-թուրքական ֆիլմերում բացահայտելու համար «Ժառանգ» հասարակական կազմակերպությունը «Թեքեյան» կենտրոնում կազմակերպել էր կինոդիտում՝ «Հայատյացությունը թուրքական եւ ադրբեջանական կինոյում» խորագրով:

Կազմակերպության նախագահ **Կարեն Վրթանեսյանի** փոխանցմամբ՝ կինոդիտման նպատակն է ֆիլմերի լեզվով երիտասարդությանը ներկայացնել, թե հարեւանները ինչպես են մեզ պատկերացնում, եւ ինչպես է հայատյացությունն ազդում զանգվածների վրա:

Թուրքիայի մշակույթի եւ զբոսաշրջության նախարարության ֆինանսավորմամբ նկարահանված «Հարյուր քայլ» ֆիլմն անդրադառնում է 1915-ին՝ խեղաթյուրելով պատմական բոլոր փաստերը: Թուրք ռեժիսորը դերերի լուրջ փոփոխություն է կատարել: Պատմությանը հայտնի եւ անժխտելի փաստերին հակառակ ցեղասպան թուրքերը ներկայանում են որպես ազնիվ, բարի եւ աշխատող ժողովուրդ, որին կոտորում են «արյունարբու» հայերը, ահաբեկում թուրք «բնիկ» ժողովրդին: Վրթանեսյանի փոխանցմամբ՝ ֆիլմը ցուցադրվել է ոչ միայն Թուրքիայի կինոթատրոններում, այլեւ հատուկ ծրագրով կինոդիտումներ են եղել դպրոցներում: Սակայն առավել զավեշտալի են ադրբեջանական ֆիլմերը:

Դրանք դիտելու համար հարկավոր է հումորի մեծ զգացողություն ունենալ: Հայերին «քոչվորներ» ներկայացնելուն զուգահեռ ֆիլմերում սկսվում է իսկական «շիլաշփոթ»: Նախ խեղաթյուրվում է Ադրբեջանի պատմությունը, պարսիկ զորավարները ներկայացվում են որպես Ադրբեջանի ազգային հերոսներ: Ադրբեջանցիներն էլ չգիտեն, թե իրականում որտեղից են ծագել: Մեկ նրանք սերել են Կովկասի ալբաններից, մեկ նրանք տեղացիներ են ու արդեն «6000-ամյա» պատմություն ունեն: Նրանց ազգային հերոսներն էլ դառնում են պարսից շահերը: Չգիտես ինչու Պարսկաստանի համար նվաճված տարածքները «Ջավանշիր» մուլտֆիլմում ներկայացվում են ադրբեջանական: Սակայն ամենացնցող բացահայտումը «Առանց Ղարաբաղի Ադրբեջան չկա» ֆիլմում է, որտեղ երիտասարդին ուղղակի հիմարի տեղ են դնում՝ համոզելով, թե խանը մի ժամանակ գտնվել է Երեւանում: Անգրագիտությամբ է աչքի ընկնում նաեւ ռեժիսորը: Շուշիում երբեւէ երկաթգիծ չի եղել, բայց չգիտես ինչպես հայերը ադրբեջանցիներին հենց երկաթգծի հարեւանությամբ են սպանում:

Ընդհանուր առմամբ ադրբեջանական ֆիլմերում որեւէ նախադասություն չի համապատասխանում իրականությանը: Դե բնական է, ադրբեջանցիները նախընտրում են անվանվել կովկասցի ալբաններ, քան ընդունել դառը ճշմարտությունը, որ իրենք սովորական քոչվոր մի ցեղախումբ են եղել, որ եկել հաստատվել են հայերի եւ այլոց բերրի հողերում:

Ի տարբերություն ադրբեջանական հերյուրանքների, հայկական կողմը պատմություն հորինելու որեւէ պատճառ չունի: Պարզապես պետք է նկարահանել պատմական ճանաչողական, վավերագրական ֆիլմեր Հայաստանի, հայ ժողովրդի, Արցախյան հերոսամարտի մասին՝ ադրբեջանական ստերին իրական պատմությամբ հակազդելու համար: Այս առումով մենք դեռ թերանում ենք

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ցնդաբանությանը պետք է արժանի հակահարված տալ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Բաբկեն Հարությունյանի** գնահատմամբ՝ քարոզչությանը, տեղեկատվական պատերազմին պետական մարմինները լուրջ չեն վերաբերվում, մինչդեռ քարոզչությունը նախորդում է իսկական պատերազմին:

Նրա գնահատմամբ՝ Հայաստանը պետք է հասնի հաջողության նաեւ քարոզչության ոլորտում: Հարությունյանը համոզված է, որ արժանի հակահարված տալու համար պետք է միավորվեն ԳԱԱ-ն, ԵՊՀ-ն, ՀՊՄՀ-ն եւ այլ կառույցներ:

«Ադրբեջանցիները հարցին մոտենում են «դե մենք ասենք», իսկ հայկական կողմը՝ «ցնդաբանություն է, դրան չպատասխանենք» տրամաբանությամբ: Մենք գիտենք, որ դա ցնդաբանություն է, մինչդեռ ամերիկացիները, եվրոպացիները ոչինչ էլ չգիտեն: Նրանք կմտածեն, որ եթե ադրբեջանցիները գրում են, հայերը չեն պատասխանում, ուրեմն ադրբեջանցիները ճիշտ են: Ցնդաբանությանը պետք է արժանի հակահարված տանք», լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց նա:

**Պուշկին Սերոբյանի** գնահատմամբ էլ ոչ ոք չի կարդում, թե ադրբեջանցիներն ինչպես են նենգափոխում պատմությունը:

«Ադրբեջանը աշխարհին տարածում է, թե Հայաստանն ագրեսոր պետություն է, հայերը բնիկներ չեն, բայց մեր ակադեմիական, գիտական եւ պատմագիտական կազմակերպությունները լռում են: Վտանգը մոտենում է, հետո արդեն ուշ կլինի: Ադրբեջանցիների այդ քայլը վտանգում է մեր ազգային անվտանգությունը, մեր երկրի վարկանիշը, նրանք մեզ ձեռք են առնում եւ վիրավորում ազգային արժանապատվությունը», ասաց նա:

Հ. Հ.

# Չտարածել անհիմն տեղեկություն

Ինչպես արդեն տեղեկացվել է, «Նաիրիտ Գործարան» ՓԲ ընկերությունում, կապված աշխատավարձերի չվճարման խնդրի հետ, ստեղծվել է լարված իրավիճակ եւ զանգվածային լրատվամիջոցների ապակողմնորոշիչ, իրականությանն ու ճշմարտությանը չհամապատասխանող տեղեկատվության տարածումը կարող է ավելի սրել այն:

Մենք խնդրել ենք առաջիկայում ձեռնպահ մնալ չստուգված եւ չհիմնավորված տեղեկատվության տարածումից (panorama.am), ինչը կարող է անկանխատեսելի հետեւանքներ ունենալ:

Սակայն panorama.am-ի թղթակիցը, նույնիսկ ներկա լինելով եւ ձայնագրելով ուրիշի ուղղակի խոսքը, ներկայացնում է ոչ ճիշտ տեղեկատվություն: Մասնավորապես այս կայքի այսօրվա «Վ. Մելքոնյան. «Նաիրիտ»-ն ավելի շատ Երեւանի օդն է տապակում, քան քիմիական արտադրանք է տալիս» հրապարակման մեջ մեջբերված է «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի խոսքը հետեւյալ կերպ. «Եթե «Նաիրիտի» նկատմամբ դրսեւորվի այն քաղաքականությունը, ինչպիսին փոքր ձեռնարկությունների նկատմամբ է, այդ դեպքում քիմիական արդյունաբերությունը նորմալ ընթացք կունենա»,-ասաց նա, նշելով, որ պետք է գտնել լուծումներ, որոնք կնպաստեն քիմիական արտադրության զարգացմանը, քանի որ այն շատ էներգատար է ու գործարանի արդյունավետությունը 40 տոկոս է»:

Այնինչ Վահան Մելքոնյանն ասել է բառացիորեն հետեւյալը. «Եթե գործարանի նկատմամբ դրսեւորվում է նույն քաղաքականությունը, որը կարող է դրսեւորվել ոչ քիմիական ձեռնարկությունների նկատմամբ, այդ դեպքում քիմիական արդյունաբերության ապագան բավականին աղոտ է: ... Այսօր մենք ջերմային էներգիայի 60 տոկոս կորուստ ենք ունենում, արդյունավետ ենք օգտագործում միայն 40 տոկոսը»:

Հաջորդ մեջբերումը՝ կրկին «Նաիրիտի» գլխավոր տնօրենի խոսքից. «Գործարանի արտադրանքը 99 տոկոսով արտահանվում է, եւ այդ առումով Հայաստանի տնտեսության վրա բացասական անդրադարձ է ունենում: Պատճառը նաեւ էլեկտրականության, ջրի ու այլ ծառայությունների թանկ գներն են, ինչը հնարավորություն չի տալիս, որ գործարանի արտադրանքը Հայաստանում մրցունակ գին ունենա: Սա լուրջ պրոբլեմ է եւ կապված է Հայաստանի տնտեսության հետ, ոչ թե միջազգային շուկայի»:

Իրականում ասվել է հետեւյալը. «Պարտքն առաջացել է, քանի որ գործարանի արտադրանքի 97 տոկոսն արտահանվում է: Քաղաքական ասելով՝ նկատի ունեմ, որ գործարանի արտադրանքը հիմնականում արտահանվում է, իսկ Հայաստանում բավականին թանկ է բնական գազի, էլեկտրաէներգիայի, ջերմային էներգիայի գինը: Այս պայմանները մեզ թույլ չեն տալիս ունենալ մրցունակ գին: Դա Հայաստանի տնտեսության խնդիրն է եւ ոչ թե միջազգային շուկայի: Դա քաղաքական խնդիր է, Հայաստանում նման գործարան աշխատեցնելու համար պետք է համապատասխան պայմաններ լինեն»:

Կարծում ենք, տարբերություններն ակնհայտ են ու խիստ կոպիտ:

Ինչ վերաբերում է այդ հրապարակման այն պնդմանը, թե ընկերության պաշտոնական կայքում իրենք չեն գտել սեփականատիրոջ անունը, ապա սիրով տրամադրում ենք nairit.am կայքի հենց այդ տեղեկատվությունը պարունակող էջը՝ http://www.nairit.am/history.php?menu–1=&:

Մենք եւս մեկ անգամ խնդրում ենք ձեռնպահ մնալ չստուգված եւ չհիմնավորված տեղեկատվության տարածումից:

*«Նաիրիտ Գործարան» ՓԲԸ հասարակայնության եւ ԶԼՄ-ների հետ կապերի ծառայություն*

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ

# Բացվեց Վազգեն Ա Հայրապետի արձանը Էջմիածնում

**Նոյեմբերի 11-ին, Մայր աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի, տեղի ունեցավ երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսի արձանի բացման արարողությունը: Արձանը կանգնեցվել է միջխորհրդարանական համագործակցության հայ-ռուսական**

**Բարսեղյանի խոսքով, որից հետո Նիկոլայ Ռիժկովին ու Ֆրիդրիխ Սողոյանին է տրվել պատիվը կատարելու Վազգեն Ա հայրապետի հիշատակը հավերժացնող արձանի բացումը: Հայրապետական իր օրհնության խոսքն է ասել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ ամենայն հայոց կաթողիկոսը:**




**հանձնաժողովի համանախագահ Նիկոլայ Ռիժկովի նախաձեռնությամբ: Քանդակագործն է ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ Ֆրիդրիխ Սողոյանը:**

**Հանդիսությանը ներկա էին Մայր աթոռի միաբանները, հայ-ռուսական միջխորհրդարանական հանձնաժողովի անդամները, Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանը, պետական այրեր, մշակույթի գործիչներ, Էջմիածնի բազում բնակիչներ:**

**Արարողությունը բացվել է Մայր աթոռի միաբան Տ. Պարթեւ աբեղա**

**Շնորհավորական եւ երախտագիտության խոսքեր են ասել նաեւ միջխորհրդարանական համագործակցության հայ-ռուսական հանձնաժողովի համանախագահ Արամ Սաֆարյանը եւ Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանը:**

**Վերջում արձանի բացման կապակցությամբ ներկաներին շնորհավորել է Նիկոլայ Ռիժկովը: Իր խոսքում արձանի տեղադրումը նկատեց ոչ թե ընծա, այլ պարտականություն մեծանուն հայրապետի հիշատակի առջեւ:**

Ս. Ս.

# Orange-ի բաժանորդները կարող են իրենց հեռախոսի կարգավորումները ստանալ Orange-ի վեբկայքի միջոցով




**Այսուհետեւ Orange-ի բաժանորդները կարող են իրենց հեռախոսի կարգավորումներն անվճար ստանալ ոչ միայն հեռախոսի մենյուի միջոցով, այլեւ ավելի հարմարավետ եղանակով՝ Orange-ի վեբկայքի միջոցով:**

**Կարգավորումները ստանալու համար անհրաժեշտ է այցելել www.orangearmenia.am կայքը եւ գլխավոր էջից մուտք գործել «առցանց կարգավորումներ» բաժինը: Հեռախոսահամարը եւ Orange գաղտնաբառը մուտքագրելուց հետո համակարգն ավտոմատ կերպով կճանաչի բաժանորդի հեռախոսի մոդելը եւ կառաջարկի ընտրել հետեւյալ ծառայություններից՝ MMS, WAP, Orange TV կամ Orange World: Ծառայություններն ընտրելուց հետո բաժանորդն իր հեռախոսին կստանա դրանց կարգավորումները, որից հետո անհրաժեշտ կլինի միայն պահպանել կարգավորումները հեռախոսում: Orange TV ծառայությունն ընտրելու դեպքում Orange World WAP կայքի էջանիշը կհայտնվի բաժանորդի վեբ-բրաուզերի էջանիշների ցանկում:**

# 10 օրվա ընթացքում աշխատավարձի հարցը կլուծվի

**Նախորդ համարում «Ազգ» օրաթերթն անդրադարձել էր «Նաիրիտ» գործարանի աշխատակիցների խնդրին, որոնք կառավարության շենքի առաջ բողոքի ակցիա էին կազմակերպել: Շուրջ 50 աշխատակից դժգոհում էին, որ գործարանն իրենց չի վճարել վերջին 4 ամսվա աշխատավարձ:**

**Երեկ նրանք հավաքվել էին նախագահի գրասենյակի դիմաց՝ պահանջելով լսել իրենց խնդիրն ու աջակցել: Ցուցարարներին հանդիպած նախագահի աշխատակազմի ղեկավար Կարեն Կարապետյանը զրուցել է «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի աշխատակիցների հետ: Նրա փոխանցմամբ՝ Սերժ Սարգսյանը հանձնարարել է գործադիր իշխանության պատասխանատուներին՝ ձեռնարկության սեփականատիրոջ հետ քննարկել ստեղծված իրավիճակն ու միջոցներ ձեռնարկել՝ 10 օրվա ընթացքում աշխատակիցների մեկ ամսվա աշխատավարձը վճարելու ուղղությամբ, այնուհետեւ՝ մեկ ամսվա ընթացքում մարել մնացած ամիսների աշխատավարձը:**

Հ. Հ.

# Օրենսդրության իմիտացիա

## *Հակասություններ աշխատանքային օրենսգրքում*

Հասարակական եւ պետական կյանքի վերափոխումների մեջ հատուկ տեղ զբաղեցնող օրենսդրական վերափոխումները այդպես էլ օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով ՀՀ-ում չապահովեցին լիակատար արդյունավետություն: Դեռեւս ցածր են օրենսդրության որակն ու իրավագիտակցության մակարդակը: Նորմատիվային «քաղցը» հաղթահարված չէ:

Օրենքներում անտեսվում են ոչ միայն իրավաբանական տեխնիկայի պահանջները, այլեւ լեզվաոճական կանոնները: Նորմատիվ ակտը դեկլարատիվ եւ վերացական բնույթ է կրում, բացակայում է դրա կիրառման մեխանիզմը: Եթե խորհրդային շրջանում պայքար էր գնում գիտությունը դոգմատիզմից ազատելու, ապա ժամանակակից գիտությունը (օրենսդրությունը) դիմում է մեկ այլ ծայրահեղության՝ պատճենահանվում են (կամ ծաղկաքաղ է արվում) եվրոպական ու անգլոսաքսոնական օրենսդրության համապատասխան դրույթները կամ տվյալ ոլորտը կարգավորող իրավական մոդելները եւ դրանք փորձում հարմարեցնել հայկական իրականությանը: Վերոհիշյալ հանգամանքների պատճառով յուրաքանչյուր տարի, նաեւ տարեկան մի քանի անգամ օրենսդրությունը անընդհատ փոփոխությունների եւ լրացումների է ենթարկվում (քրեական, քաղաքացիական, հարկային, մաքսային եւ այլն): Այդպիսի դասական նմուշ է նաեւ 2004թ. ընդունված մինչեւ 2009թ. մի քանի անգամ արդեն փոփոխությունների ենթարկված, 2010թ. արմատական փոփոխությունների ենթարկված օգոստոսին ուժի մեջ մտած եւ անմիջապես Ազգային ժողովին նորից փոփոխությունների ներկայացված (համոզված եմ՝ ոչ վերջին անգամ) ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, ինչը պատիվ չի բերում երկրի իրավաբանական դպրոցի ներկայացուցիչներին:

Ընդհանուր առմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարված վերջին փոփոխություններով գործատուի լիազորությունների ծավալը ընդլայնվել է: Այսպես, 105 հոդվածի նոր խմբագրությամբ գործատուն ինքնուրույն է փոփոխում աշխատանքի էական պայմանները (նախկինում անհրաժեշտ էր աշխատողի համաձայնությունը), 155 հոդվածով գործատուի հայեցողությանն է մնացել իր ղեկավարած կազմակերպությունում աշխատանքի եւ հանգստի ռեժիմ սահմանելը ելնելով տնտեսական նպատակահարմարությունից եւ այլն:

Օրենսգրքի 163 հոդվածի նոր ձեւակերպմամբ փոփոխվել են ամենամյա արձակուրդը մասերով (Ռուսաստանի Դաշնության աշխատանքային օրենսգրքի 125 հոդվածի պատճենահանումը) տրամադրելու հետ կապված աշխատանքային հարաբերությունները: Եթե նախկինում արձակուրդը մասերով տրամադրելու հարցում նախապատվությունը էր տրվում աշխատողի ցանկությանը, ապա այժմ տրվել է կողմերի համաձայնությանը: Այսինքն՝ գործատուն պետք է համաձայն լինի թեկուզ երկու մասով աշխատողին արձակուրդ տրամադրելու: Առաջին հայացքից թվում է, թե ամեն ինչ պարզ է՝ ամենամյա նվազագույն արձակուրդի տեւողությունը հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում 20 աշխատանքային օր է, եւ արձակուրդի մասերից մեկը պետք է կազմի առնվազն 10 աշխատանքային օր: Մնում է 10 աշխատանքային օր, ինչը պետք է տրամադրվի մյուս մասով: Այսինքն՝ աշխատողին կարող է արձակուրդ տրամադրվել երկու անգամ: Նման տրամաբանության է հանգեցնում մանավանդ «ամենամյա արձակուրդը մասերով տրամադրելու դեպքում» բառակապակցությունը: Այն է՝ թեկուզ երկու մասով տրամադրելը պարտադիր նախապայման չէ, միայն որոշակի դեպքերում դա կարող է կատարվել:

Ինչն է վեճի առարկան. Օրենսդիրը տրամադրվող արձակուրդի մի մասին իմպերատիվ լուծում է տվել, մյուս մասը թողել անորոշ՝ գործատուի հայեցողությանը, որով պայմաններ է ստեղծել տարաբնույթ եզրահանգումներ կատարելու: Բայց թե ինչ հիմքերի առկայության դեպքում գործատուն կարող է համաձայն լինել կամ մերժել արձակուրդը մասերով տրամադրելը՝ օրենքը չի մեկնաբանում:

Քննարկվող հարցով իմ հարցադրումներին տարբեր մոտեցումներ են դրսեւորել նաեւ օրենսգրքի փոփոխություններին առնչված անձինք:

Եթե օրենսդիրը վերապահում է կատարել, որ մասերից մեկը կարող է նաեւ մասերի բաժանվել, ապա մի քանի ամիս առաջ գործող օրենսգիրքը դա հստակ կարգավորում էր «աշխատողի ցանկությամբ արձակուրդը կարող է տրամադրվել մասերով» ձեւակերպմամբ: Որոշեցին փոփոխել «աշխատողի ցանկությամբ» բառերը «կողմերի համաձայնությամբ» բառերով:

Եթե կատարվել է փոփոխություն, ուրեմն նախկին նորմերը նորմալ չեն աշխատել:

Որեւէ հիմնավորում չունի նաեւ աշխատողի արձակուրդի առաջին կամ երկրորդ մասը, ոչ ավել, ոչ պակաս, 10-օրյա կոնկրետ պայմանների մեջ սահմանափակելը: Ինքս բազմաթիվ օրինագծերի հեղինակ եմ եղել, բայց սա իրավակիրառ պրակտիկայում ինձ հանդիպած պարադոքսներից մեկն է՝ «հումոր» իրավագիտության մեջ: Մասերով տրամադրելու կողմնակիցների տրամաբանությամբ մասերից մեկը կարող է մեկական օրով տրամադրվել, օրինակ՝ 10 անգամ, ուրեմն տարվա մեջ աշխատողը տեսականորեն կարող է 11 անգամ լինել արձակուրդում: Այսպես են պարզաբանել աշխատանքի պետական տեսչության իրավական վերահսկողության բաժնի պետ Վ. Դանիելյանը, «Գործք» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Սարգսյանը եւ այլն: Հակառակ կարծիք է հայտնել արդարադատության փոխնախարար Գ. Մալխասյանը: Ամենաուժեղ երեւակայությամբ օժտված մարդը նման վիճակ չի կարող պատկերացնել: Վերջին հաշվով արձակուրդը տրամադրվում է աշխատողին հանգստանալու եւ աշխատունակությունը վերականգնելու համար (ՀՀ աշխ. օր.-ի 158 հոդված), իսկ եթե աշխատողին անհրաժեշտ է 1, 2, 3 օր, ապա կարող է օգտվել նշված օրենսգրքի 176 հոդվածով ընձեռված հնարավորությունից: Ներկայիս «ինտերնետային» իրավաբանները լուծում չգտնելով՝ պնդում են, թե գործատուն թող որոշի՝ ում մերժել, ում տրամադրել: Այս դեպքում երկակի ստանդարտներ կստեղծվեն ոչ միայն միեւնույն կազմակերպությունում, այլեւ հանրապետությունում. ինչ-որ մի խավի կամ հիմնարկի աշխատողի մի քանի անգամ արձակուրդ է տրվում, իսկ մյուսին՝ ոչ:

Այս պայմաններում խաթարվում է սոցիալական արդարությունը: Կարճատեւ արձակուրդի տրամադրումով ոչ միայն խախտվում են աշխատանքային կարգապահությունը, աշխատանքի ռիթմը, այլեւ արհեստականորեն առաջանում է չօգտագործված արձակուրդների կուտակում, արձակուրդների տրամադրման հերթականության հաստատված գրաֆիկը խճճվում է, փոխարինողի հարցը հաճախ է լուծվում կամ բաց է մնում, խնդիրներ են առաջանում հաշվապահության եւ կադրերի բաժնի համար եւ տեղիք տալիս ավելորդ ծախսերի:

Սոցիալական ապահովության նախարարության աշխատանքի տեսչության աշխատակիցները ինչ լուծում են առաջարկում հնարավոր հետեւյալ դեպքերում.

1. Եթե գործատուն աշխատողին տրամադրում է արձակուրդ, մյուսին՝ ոչ, վերջինս կարո՞ղ է բողոքարկել դատարան: Կամ հակառակը՝ աշխատողը կարո՞ղ է 11 անգամ արձակուրդում լինել:

2. Եթե գործատուն մեկ փուլով է տրամադրում արձակուրդ, ապա աշխատողը կարող է վեճը լուծել դատական կարգով (ՀՀ աշխ. օրենսգրքի 264 հոդված):

3. Յուրաքանչյուր կազմակերպության ստորաբաժանումները որպես կանոն արձակուրդների ժամանակացույցը ըստ ամիսների (հաջորդ տարվա համար) կազմում են դեկտեմբերին, ինչը ներկայացվում է տնօրենի հաստատմանը: Հարց եմ ուղղում օրենքը պարզաբանողներին՝ ի՞նչ կածիի եք՝ արձակուրդի առաջին կեսը՝ 10 օրը, ձեւակերպել առաջին փուլո՞վ, թե՞ 2, 3 օրերով տալ, իսկ 10 օրը թողնել վերջում: Նման պայմաններում ի՞նչ անել տնօրենի հաստատած արձակուրդի ժամանակացույցը:

Վերջապես հարց է առաջանում, թե հասարակության որ շերտերին կամ որ բնագավառի աշխատողներին կարող է տրամադրվել երկու մասից ավելի արձակուրդ: Մեր դիտարկումները ցույց են տվել նաեւ, որ պետական սեկտորի՝ նախագահի աշխատակազմի աշխատողներին, կառավարության անդամներին, նախարարի տեղակալներին, վարչության կամ բաժնի պետերին, քաղաքապետարանների, մարզպետարանների, գիտության, կրթության, առողջապահության, սոցիալական, բանկերի եւ այլ ոլորտներում մեկ փուլով է արձակուրդ տրամադրվել, բացառիկ դեպքերում՝ երկու մասով:

Առավել եւս ուժային կառույցների՝ ազգային անվտանգության, դատախազության, պաշտպանության, ոստիկանության, հարկային, մաքսային, հարկադիր կատարման ծառայությունների եւ դատական համակարգի աշխատողները եւ հենց իրենք՝ աշխատանքի տեսչության աշխատողները աշխատանքի բնույթի հետ կապված հրատեսակա՞ն են համարում արդյոք տարեկան մի քանի անգամ արձակուրդ մեկնելը:

Իսկ մասնավոր սեկտորի՝ բիզնեսի ոլորտում երկու մասով արձակուրդ տրամադրելը բացառվում է, որովհետեւ վարձու աշխատողները կատարում են միայն գործատուի՝ «շեֆի» հանձնարարականները՝ վախենալով դուրս շպրտվել աշխատանքից, էլ ինչ խոսք կարող է լինել մասերով արձակուրդ տրամադրելու մասին, միայն սեփականատերը կարող է իրեն թույլ տալ ամբողջ տարին արձակուրդի մեջ լինել:

Վերը շարադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ արձակուրդը երկու մասից ավել մասնատելը զուրկ է բովանդակային բնույթից եւ որեւէ հիմնավորում չունի: Մեր կարծիքով՝ երկու մասով արձակուրդ տրամադրելը (այն էլ անհրաժեշտությունից ելնելով) լրիվ մարդասիրական է, չի հակասում ժողովրդավարության սկզբունքներին եւ բխում է սոցիալական պետության պահանջներից, ու կարիք չկա ավելորդ ժողովրդավարություն խաղալու:

Աշխատանքով ծանրաբեռնված կազմակերպությունը կամ ղեկավար աշխատողը նման շռայլություն իրեն չպետք է թույլ տա (կարող է բացառություն կազմել էներգամատակարարման, գազամատակարարման եւ այլնի տնօրենների համար՝ անհրաժեշտությամբ պայմանավորված):

Կարծում եմ՝ վերոհիշյալ վերլուծությունը լիարժեք հիմք է տալիս փոփոխելու նշված հոդվածի դիսպոզիցիան՝ աղավաղված մասը հստակեցնել հետեւյալ խմբագրությամբ՝ «Գործատուի համաձայնությամբ ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել երկու մասով», յուրաքանչյուր մասի օրերի քանակի ընտրությունը թողնելով աշխատողի ցանկությանը:

Օրենսգրքում տեղ գտած հաջորդ անհեթեթությանը՝ 167 հոդվածին, ամենամյա արձակուրդի տեղափոխմանը եւ երկարաձգմանը կանդրադառնանք հաջորդ վերլուծականում:

**Ա. ԱՎԱԳՅԱՆ**
**Արդարադատության նախկին փոխնախարար, ՀՀ նախկին գլխավոր հարկադիր կատարող, «Հայռուսգազարդ» ՓԲԸ անձնակազմի կադրերի բաժնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու**

# Ստեփանակերտում եւս կստեղծվի տարածքային կենտրոն

Արցախում նախատեսվում է շուրջ 800 միլիոն դրամով ավելացնել առողջապահության ոլորտում ներդրվող պետական միջոցների չափը: Այս մասին նշել է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը ՀՀ առողջապահության ազգային ինստիտուտի մի խումբ բժիշկների հետ Ստեփանակերտում ունեցած հանդիպման ժամանակ:

Ինստիտուտի տնօրեն Դ. Դումանյանը Արցախի նախագահին է ներկայացրել այցի արդյունքները: Նրա խոսքով, ինստիտուտի համապատասխան մասնագետները նոյեմբերի 9-ին լինելով Բերձորում, բժշկական օգնություն են ցուցաբերել ավելի քան 120 այցելուների, ինչպես նաեւ տեղի մասնագետների հետ անցկացրել են խորհրդատվություններ: Հաջորդ օրը բժիշկները եղել են Ստեփանակերտի մանկաբարձա-գինեկոլոգիական եւ մանկական բուժհաստատություններում, որտեղ ընդունել են 350 հիվանդների: Հետագա այցելությունների ցանկում ծրագրված է ընդգրկել նաեւ Հադրութի, Շահումյանի ու Մարդակերտի շրջանները:

Դ. Դումանյանը տեղեկացրել է, որ նույն ծրագրի շրջանակում իրենք արդեն բուժսպասարկում են իրականացրել ՀՀ բոլոր մարզերում: Հայաստանի հանրապետական կուսակցության 20-ամյակի պատվին իրականացվող ակցիայի նպատակը մարդասիրական կարգով ազգաբնակչությանը շարունակաբար բժշկական օգնություն ցուցաբերելն է: Արցախ գալով խումբն իր հետ բերել է դեղորայք, բժշկական պարագաներ, գործիքներ, վիրակապական նյութեր: Ինստիտուտի տնօրենը միաժամանակ իրազեկել է, որ Շիրակում, Լոռիում, Տավուշում եւ Սյունիքում ստեղծել են տարածքային կենտրոններ, եւ նպատակ կա նման կենտրոն ստեղծելու նաեւ Ստեփանակերտում:

Բակո Սահակյանը գոհունակությամբ է ընդունել առաջարկությունը: Խոսելով առողջապահության համակարգում իրականացվելիք ծրագրերի մասին՝ նախագահը մասնավորապես շեշտել է Արցախում դատաբժշկական փորձաքննության ժամանակակից կենտրոն ստեղծելու անհրաժեշտությունը, այս խնդրում դարձյալ ակնկալելով հայաստանյան մասնագետների աջակցությունը:

Հանդիպման ժամանակ Դ. Դումանյանը գոհունակություն է արտահայտել ստեփանակերտցի գործընկերների աշխատանքից՝ ընդգծելով նրանց մասնագիտական պատրաստվածությունը: Համամիտ լինելով այդ գնահատականին, ԼՂՀ նախագահը միեւնույն ժամանակ նշել է, որ հանրապետությունում ընդհանուր առմամբ իրականացվում է միջինից ցածր բժշկական սպասարկում. հատկապես հեռավոր շրջաններում դեռեւս ի վիճակի չեն մատուցել պատշաճ բժշկական ծառայություն: Իսկ պատշաճ մակարդակ ապահովելը հնարավոր է հայաստանյան մասնագետների գործուն մասնակցությամբ: Նա առաջարկել է նման հանդիպումները դարձնել եռամսյակը մեկ, քանզի տարվա կտրվածքով երկօրյա այցելությունները չեն կարող ցանկալի արդյունք ապահովել: Պատվիրակության անդամները հոժարությամբ են ընդունել նպատակային այցելությունները հաճախակի դարձնելու գաղափարը:

**ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**
**Ստեփանակերտ**

# ՀՀ արտգործնախարարը Հնդկաստանում

## «Ադրբեջանի նախագահը նույնիսկ դպրոցականների դիմաց է սուր ճոճում»

Հնդկաստանում գտնվող ՀՀ արտաքին գործերի նախարարին երեկ ընդունել է իր հնդիկ գործընկերը՝ Սոմանահալլի Մալլայահ Կրիշնան: Ավելի վաղ Էդվարդ Նալբանդյանին հյուրընկալել էր Հնդկաստանի փոխնախագահը:

Հայ եւ հնդկական արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները խոսել են երկկողմ դարավոր բարեկամությունից եւ ցանկություն հայտնել այն ամրապնդելու: «Հայաստանի եւ Հնդկաստանի միջեւ չկա որեւէ խնդիր, որ բաժանում է կողմերին, այլ կան շատ գործոններ, որոնք միավորում են մեր երկրներին: «Տարածաշրջանային եւ միջազգային հարցերի վերաբերյալ մեր տեսությունները ունեն փոխըմբռնում, նույնանման կամ շատ մոտ դիրքորոշումներ», ընդգծել է Հայաստանի արտգործնախարարը: **Նալբանդյանը** վերահաստատել է Քաշմիրի հարցում Հայաստանի դիրքորոշումը եւ շնորհակալություն հայտնել հնդիկ գործընկերոջը Կովկասում առկա խնդիրների վերաբերյալ Հնդկաստանի հավասարակշռված դիրքորոշման համար: **Կրիշնան,** իր հերթին, ասել է, որ Հնդկաստանը բարձր է գնահատում Հայաստանի մշտական աջակցությունը իր երկրի համար կարեւոր հարցերում, մասնավորապես՝ Քաշմիրի խնդրի առնչությամբ: Հայաստանի արտգործնախարարը ներկայացրել է Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացի վերջին զարգացումները:

Հանդիպումից հետո Հայաստանի եւ Հնդկաստանի արտգործնախարարների ներկայությամբ Հնդկաստանում Հայաստանի դեսպան Արա Հակոբյանը եւ Հնդկաստանի մշակույթի նախարարության պետքարտուղար Ջավար Սիրկարը ստորագրել են Հայաստանի եւ Հնդկաստանի մշակույթի նախարարությունների միջեւ 2011-2012 թվականների մշակութային համագործակցության հուշագիր:

Էդվարդ Նալբանդյանը նաեւ ընդարձակ հարցազրույց է տվել Հնդկաստանի պետական հեռուստատեսությանը, այցելել է Միջազգային հարաբերությունների հնդկական խորհուրդ, ուր հանդես է եկել Հայաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ ծավալուն ելույթով, որին ներկա էին Նյու Դելիում հավատարմագրված դեսպաններ, ԱԳՆ բարձրաստիճան պաշտոնյաներ, քաղաքագետներ, վերլուծաբաններ եւ լրագրողներ: Միջազգային հարաբերությունների հնդկական խորհրդի տնօրեն Սուդհիր Դեւարի հետ կայացած հանդիպմանը Էդվարդ Նալբանդյանը քննարկել է Հայաստանի արտգործնախարարության դիվանագիտական դպրոցի եւ խորհրդի համագործակցության հնարավորությունները:

Էդվարդ Նալբանդյանը հինգշաբթի օրը ելույթ ունենալով Նյու Դելիում՝ Միջազգային հարաբերությունների հնդկական խորհրդում, խոսել է ինչպես հայ-ադրբեջանական վերջին զարգացումներից, այնպես էլ հայ-թուրքական գործընթացներից: Ըստ ՀՀ արտգործնախարարության հաղորդագրության՝ Նալբանդյանը մասնավորապես նշել է. «Հոկտեմբերի 27-ին Աստրախանում կայացած Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումից հետո հրապարակվեց համատեղ հայտարարություն, որն ընդգծում էր, որ քաղաքական-դիվանագիտական միջոցներով հիմնախնդրի կարգավորման համար հարկավոր է լրացուցիչ քայլեր ձեռնարկել ռազմական ոլորտում փոխադարձ վստահության, ինչպես նաեւ հրադադարի ռեժիմի ամրապնդման համար: Որպես առաջին քայլ՝ ձեռք բերվեց համաձայնություն փոխանակելու ռազմագերիներին եւ վերադարձնելու զոհվածների դիակները: Պայմանավորվածությունները սկսեցին իրագործվել, սակայն ցավալի է, որ անգամ այս փոխանակումը Ադրբեջանը շահարկեց հասարակական կարծիքը մոլորեցնելու նպատակով»: Նախարարը իր խոսքերը հիմնավորել է նոյեմբերի 7-ին զոհված ադրբեջանցիների հուղարկավորման արարողության ընթացքում Իլհամ Ալիեւի հայտնի հայտարարությունները մեջբերելով. «Նա (նկատի ունի Ալիեւին-Հ. Ա.) մի քանի անգամ հիշատակեց մահապարտ «շահիդներին»՝ խաղալով Ադրբեջանի բնակչության կրոնական զգացմունքների հետ, եւ նշեց, որ դա կարող է օրինակ ծառայել երիտասարդ սերնդի համար: Զարհուրելի է, որ անգամ ելույթ ունենալով երեխաների առջեւ՝ դպրոցի բացման արարողության ժամանակ, Ադրբեջանի նախագահը սուր է ճոճում՝ թմբկահարելով Ադրբեջանի ռազմական ներուժը, պնդելով, որ Հայաստանը եւ Երեւանը ադրբեջանական հող է, ու դրա մասին պետք է մանուկները իմանան: Այո՝ սա 1939-ի Գերմանիան չէ, սա 2010-ի Ադրբեջանն է», ընդգծել է Նալբանդյանը՝ նկատելով, որ այդ երկրի ռազմական բյուջեն վերջին 7 տարվա ընթացքում աճել է 18 անգամ. «Ադրբեջանի սանձազերծած նախորդ պատերազմի վերքերը դեռ չեն ապաքինվել, մինչդեռ Բաքուն նոր արկածախնդրություն է պատրաստում: Հիմա, եթե Ադրբեջանն իրոք ցանկություն ունի գնալու Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորմանը, ապա պետք է ուղղորդի նման անհիմն ու սադրիչ գործողությունների վրա վատնվող եռանդն ու ռեսուրսները Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցություններին ոչ թե ձեւական, այլ գործնական մասնակցություն ունենալուն», հայ-ադրբեջանական թեման եզրափակել է ՀՀ արտգործնախարարը:

Հայ-թուրքականի մասով Նալբանդյանը եւս մեկ անգամ շեշտել է, որ չկա ո՛չ «լուռ քաղաքականություն», ո՛չ Ցյուրիխի «երկրորդ փուլ», ոչ էլ նոր բանակցություններ. «Թուրք քաղաքական գործիչներից ոմանք խոսում են այս ամենի մասին, սակայն ես չեմ հասկանում, թե ո՞ւմ է ուղղված «լուռ դիվանագիտությունը»: Հռոմեական փիլիսոփա-կայսր Մարկոս Ավրելիոսի հայտնի «Մտքերը» վերնագրված էին՝ «Ինքս ինձ մտքեր հասցեագրելով»: Փիլիսոփաները եւ որոշ կայսրեր հավանաբար իրենց մտքերը հենց իրենց են հասցեագրել: Միակ քայլը, որ մնում է այս երկարատեւ գործընթացում, հայ-թուրքական արձանագրությունների վավերացումն ու իրականացումն է՝ առանց հավելյալ ձգձգումների: Հայաստանը պատրաստ կլինի շարժվել առաջ, եթե Թուրքիան նորից պատրաստ կլինի շարժվել առաջ՝ առանց կարգավորման գործընթացում նախապայմանների», եզրափակել է Էդվարդ Նալբանդյանը:

Երեկ Հայաստանի արտգործնախարարը մեկնեց Կալկաթա, ուր հանդիպում ունեցավ Արեւմտյան Բենգալի նահանգապետի, ինչպես նաեւ տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Հ. Ա.

## Ուկրաինան ուզում է մշակել չեռնոբիլյան հողերը

Ուկրաինայի իշխանությունները մտադիր են գյուղատնտեսությունը ծավալել չեռնոբիլյան հողերի հաշվին: 2011-ի մարտին կհրապարակվի ռադիոակտիվ վարակվածության եւ տարածքների գյուղատնտեսական յուրացման ծրագիր: Ավելի վաղ նույնտիպի նախաձեռնությամբ հանդես էր եկել Բելառուսի ղեկավարությունը, որը մտադիր է մինչեւ 2020 թ. աշխուժացնել չեռնոբիլյան գոտու իր մասը: «Նեզավիսիմայա գազետա» թերթը գրում է, որ փորձագետները



այս կապակցությամբ տագնապ են հնչեցնում:

Ուկրաինայի արտակարգ իրավիճակների նախարարի պաշտոնակատար Միխայիլ Բոլոտսկիխը օրերս հայտարարեց, որ կառավարությունը մշակում է չեռնոբիլյան հողերի յուրացման ծրագիր: Կառավարությունն առայժմ պարզաբանումներ չի տալիս, սակայն այդ խնդրով զբաղվող գիտնականներից մեկը խոստովանում է, որ չեռնոբիլյան գոտու վերականգնման աշխատանքներ վաղուց չեն կատարվում: Նա պնդում է, որ բազմամյա հետազոտությունների գլխավոր արդյունքը տարբեր տարածքների համար նախատեսված ալգորիթմների մշակումն է. մշակաբույսերի հերթագայություն, պարարտանյութերի ոչ ավանդական միացումներ եւ այլն:

«Գիտափորձերը ցույց տվեցին, որ միատեսակ ելակետային աղտոտվածության պայմաններում, վերականգնողական միջոցառումների ենթարկված տարածքներում գյուղմթերքների մեջ ռադիոնուկլիդների մակարդակը կարող է կրճատվել մի քանի հարյուր անգամ՝ փաստորեն մոտենալով նորմային», պարզաբանում է հիշյալ գիտնականը:

Մինչդեռ փորձագետներից շատերը վախենում են, որ իրավիճակը կարող է դուրս գալ վերահսկողությունից, եւ շուկայում կհայտնվեն վտանգավոր գյուղմթերքներ:

«Անդրուրանային տարրերի կիսատրոհման ժամանակաշրջանը մինչեւ 24 հազար տարի է: Վերջին տարիներին որոշ տարրերի կիսատրոհման հետեւանքով առաջացել են ուրիշները: Այդ ամենն առայժմ անհնար է ճշգրտորեն ուսումնասիրել կամ կանխատեսումներ անել: Վարակված հողը վարելով օդի եւ ջրամբարների աղտոտվածությունն ուժեղացնելը հանցագործություն է», ասում է ճառագայթային-բնապահպանական վերահսկողության նախկին պաշտոնյաներից մեկը:

## Նորվեգիայում մերժվում է աշխարհում «ամենահյուսիսայինը» համարվող մզկիթի կառուցումը

Նորվեգիայի իշխանություններն արգելել են երկրի հյուսիսում մզկիթի կառուցումը: 2.5 մլն եվրո արժողությամբ մզկիթը Թրոմսո քաղաքում կառուցվելու պարագայում կդառնար աշխարհում ամենահյուսիսային կետում գտնվող մզկիթը: Մերժման հիմնական պատճառ իշխանությունները համարում են այն հանգամանքը, որ շինարարությունը ֆինանսավորելու էր մի երկիր, որը լիարժեք հարգանք չի դրսեւորում կրոնական ազատությունների նկատմամբ: Ըստ էության, նորվեգական իշխանություններն այդպիսով ակնարկում են Սաուդյան Արաբիան, քանի որ մզկիթի կառուցումը ֆինանսավորելու էր սաուդցի գործարար Համիդ ալ Ջիմսը:

«Իշխանությունների այս քայլը տրամաբանական եւ սպասված էր, քանի որ Նորվեգիան չէր կարող թույլ տալ մզկիթ կառուցել մի երկրի հաշվին, ուր չկան կրոնական ազատություններ», այս կապակցությամբ հայտարարել է Նորվեգիայի ատգործնախարարության մամլո խոսնակ **Ռանհիլդ Ամռսլոռը**: Բացի այդ՝ նշվում է, որ մզկիթի կառուցման համար անհրաժեշտ համարվող պայմաններից մեկը՝ Նորվեգիայի իշխանությունների գրավոր համաձայնությունը, եւս չի եղել: Նույն հիմնավորմամբ ավելի վաղ մերժվել էր մեկ այլ մզկիթի կառուցումը նաեւ Օսլոյում:

Լ. Մ.

## Եվրոպայում «Ալ Ղաիդայի» նոր ներկայացուցիչն է Սաիֆ ալ Ադելը

«Ալ Ղաիդայի» առաջնորդ Ուսամա բեն Լադենը Եվրոպայում ահաբեկչական ցանցի ներկայացուցիչ է նշանակել Սաիֆ ալ Ադելին, որի անունը նշանակում է «Արդարադատության սուր»: Նոր ղեկավարը արդեն աչքի է ընկել Եվրոպայում մի շարք ահաբեկչությունների նախապատրաստմամբ (դրանք հաջողվել է կանխել): Եվրոպական եւ ամերիկյան հատուկ ծառայություններին լուրջ անհանգստություն պատճառեցին Եմենից առաքված ռումբերը, որոնք օդանավերում պետք է պայթեին ԱՄՆ-ի օդային տարածքում:

Ամերիկյան եւ պակիստանյան աղբյուրներ վկայակոչելով՝ Լոնդոնի «Դեյլի թելեգրաֆ» թերթը գրում է, որ ալ Ադելը իր գործողություններով ուզում է Արեւմուտքի երկրների հանրությանը ներշնչել, որ հակաահաբեկչական պատերազմում անհնար է հաղթել: Եթե «Ալ Ղաիդան» կարողանա ընկճել արեւմտյան հասարակության մարտական ոգին, ապա հեշտությամբ կզավթի իշխանությունը Սոմալիի եւ Եմենի նման թույլ պետություններում:

«Ալ Ղաիդայի» պակիստանցի փորձագետ Սյեդ Սալիմ Շահզադը նշում է, որ ալ Ադելի ռազմավարությունը «բազմաթիվ փոքր ահաբեկչությունների կազմակերպումն է, օգտագործելով (որտեղ հաջողվի) բարյակացած կազմակերպությունների եւ մարդկանց հնարավորությունները»: Ամերիկացի որոշ փորձագետներ նույնպես կարծում են, որ «Ալ Ղաիդան» ծրագրում է փոքր, բայց հաճախակի կրկնվող ահաբեկչություններ, որոնք «կպատճառեն ավելի մեծ վնաս, քան մեկ մեծ ահաբեկչությունը»:

## 19 տարվա բանտարկություն Տայվանի նախկին նախագահին

Տայվանի գերագույն դատարանը երկրի նախկին նախագահ Չեն Շույբիանին եւ նրա կնոջը՝ Ու Շուչժենին կաշառակերության համար դատապարտել է 19 տարվա բանտարկության: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Դատավճիռը կայացվել է ստորին ատյանի որոշման առիթով Շույբիանի գանգատարկումից հետո: Նա մեղադրվում է հողատարածքների կառուցապատման եւ որոշ պետական պաշտոնյաների նշանակման ժամանակ կաշառք վերցրած լինելու մեջ:

Նախկին նախագահն ու նրա կինը մեղադրվում են նաեւ փողերի լվացման եւ բյուջեի միջոցների սխալ օգտագործման մեջ: Քննիչների տվյալներով, Չեն Շույբիանի նախագահության 8 տարիների ընթացքում (2000-2008) երկրի բյուջեի միջոցներից վատնվել է 20 մլն դոլար:

Փորձագետների կարծիքով, դատավճիռը կարող է ազդել նոյեմբերի 27-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունների արդյունքների վրա: Ընտրողներից շատերի համար Չեն Շույբիանը մարմնավորում է Տայվանի լիակատար անկախության գաղափարը, որի ջատագովները ընդդիմադիր կուսակցություններն են: Շույբիանը ձերբակալված է 2008-ից: Նրա կինը ընդունել է փողերի լվացման եւ փաստաթղթերի կեղծման մեղադրանքները, բայց չի ընդունում կաշառակերության եւ վատնումների մեղադրանքները:

## Թալաբանին մնացել է Իրաքի նախագահի պաշտոնում



Իրաքի խորհրդարանի պատգամավորները ընտրել են երկրի նախագահ եւ խորհրդարանի նախագահ: Երկրի նախագահի պաշտոնը պահպանել է քուրդ Ջալալ Թալաբանին, որի օգտին քվեարկել է 195 պատգամավոր: Խորհրդարանի նախագահի պաշտոնում ընտրվել է սուննի ընդդիմության ներկայացուցիչ Օսամա ալ Նուջաֆին: Նա ստացել է 295 պատգամավորներից 227-ի քվեները: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Քվեարկությունը հնարավոր է դարձել այն բանից հետո, երբ մարտին Իրաքի խորհրդարան մտած քաղաքական կուսակցությունները կարողացան պայմանավորվել կառավարական կոալիցիայի ստեղծման շուրջը:

Հոկտեմբերի 10-ի երեկոյան ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, վարչապետի պաշտոնը պահպանում է Նուրի ալ Մալիքին, որը տվյալ պաշտոնում է 2006-ից:

Նախագահ վերընտրված Ջալալ Թալաբանին հավաստիացրել է, որ ինքը հենց ալ Մալիքիին կխնդրի կազմել նոր կառավարություն: Արդեն հայտնի է, որ կառավարության կազմում կընդգրկվեն ընդդիմադիր «Իրաքի ազգային շարժում» կուսակցությունը նախկին վարչապետ Իյադ Ալլաուիի գլխավորությամբ: Կուսակցությունը փոքր առավելությամբ հաղթել է ընտրություններում, բայց կոալիցիա է կազմել ուրիշ կուսակցությունների հետ:

Կառավարության ղեկավարի պաշտոնը Նուրի ալ Մալիքին պաշտոնապես կստանձնի նոյեմբերի 20-ին՝ Կուրբան-Բայրամ տոնի հանգստյան օրերից հետո: Երկիրը կառավարություն չուներ ութ ամիս՝ խորհրդարանական ընտրություններից ի վեր:

Օսամա ալ Նուջաֆին կրթությամբ ճարտարագետ է, 2005-ին կարճ ժամանակով զբաղեցրել է արդյունաբերության նախարարի պաշտոնը: Նա Նինվեի նահանգապետի եղբայրն է:

Լ. Մ.

ԱԶԳ

# Մշակույթ

## Այպագայի հայ քաղաքացին՝ գիտակից ու պատրաստ

Սիլվա Տէր-Ստեփանյանի մանկավարժական մեթոդի հայաստանյան տեղայնացման առաջին փորձը՝ Օշականում, հաջողություն է արձանագրում:

Նյու Ջերսիում իր հիմնադրությամբ գործող Ամերիկայի Հայոց Արեւելյան թեմի Խրիմյան կիրակնօրյա ճեմարանի ուսումնական ծրագրերի բովանդակությունն ու ուղղվածությունը ազգապահպան գաղափարին է ծառայում՝ թե ինչպես է կարելի երկրի, հայրենիքի ներկայություն ներարկել երբեւէ Հայաստանում չեղած, օտարաբնակ, օտարախոս հային. հաջողության գրավականը անխոս, ոչ միայն հմուտ մանկավարժի իր ծիրն է, այլեւ նվիրումը, կրքոտ սերը՝ մայրենի լեզվին, հայ եկեղեցուն ու մշակույթին: Կիրթ, բանիմաց անձնավորության դաստիարակության ընթացքը նա ամբողջական է համարում ազգային արժանապատվության ներարկմամբ՝ օտարության մեջ ապրող հայ մարդու համար այդ զգացումը համարելով առանձնակի կարեւոր, ինչպես սիրում է նա հաճախ կրկնել, որպեսզի «գիտակից եւ պատրաստ հայ քրիստոնյա դառնա»: Իսկ դրա նախապայմանը, իր համոզմունքով, ազգային արժեհամակարգի ճանաչումն է, իրազեկ լինելը հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին: Ինքը որոշակի ընտրությամբ էլ իր դասագրքերում ներառում է մեր անցյալի հերոսական դրվագներ, նշանավոր անհատներ:

Սիլվա եւ Իրմա Տէր-Ստեփանյան քույրերը իրենց ազգանվեր գործը շարունակում են նաեւ Հայաստանում, նրանք հիմնադիր-հովանավորն են Թեքեյան մշակութային միության «Վահան Թեքեյան» ամենամյա մրցանակի երկու անվանակարգի՝ «Արա-Մարալ» եւ «Դավիթի պարսատիկեն»: Նրանց բարեհոգի նախաձեռնությամբ եւ աջակցությամբ Արագածոտնի թեմի Օշականի Սբ Մաշտոցի առաջնորդանիստ եկեղեցու հովանու ներքո չորս տարի առաջ սկսեց գործել «Խրիմյան» կրթօջախը՝ այն նույն սկզբունքով ու ոգով, ինչ Նյու Ջերսիի համանուն ճեմարանն է: Կրթօջախի 4 խմբերում սովորում են Օշական գյուղի 90 աշակերտ՝ սկսած 9 տարեկանից: Անվճար ուսուցման հետ նրանց տրվում է համազգեստ եւ գրենական պիտույք: Կրթօջախի դասընթացների (բարոյագիտություն, կենցաղավարություն, ձեռարվեստ, հայ ժողովրդի եւ հայ եկեղեցու պատմություն եւ այլ առարկաներ), նաեւ մայրաքաղաքից հրավիրված տարբեր մասնագետների մասնակցությամբ հաճախակի կազմակերպվող բազմաբովանդակ ձեռնարկների շնորհիվ նրանց կրթությունը ավելի համակողմանի բնույթ է կրում, ընդհանուր զարգացման ավելի լայն հնարավորություններ ընձեռում:



Կրթօջախի առանձնահատկությունը եւ առաքելությունը փոքր տարիքից հայ երեխայի մեջ առաջնորդ լինելու ձգտման սերմանումն է: Դրան նպաստում է ուսումնական ծրագրերի ու դասագրքերի բովանդակությունը՝ դաստիարակել հայ պարմանի-պարմանուհուն ղեկավար-առաջնորդի ոգով՝ ձեւավորել եւ արթնացնել նրանց մեջ այդ զգացումը, զարգացնել անհատական հատկանիշներ այնպես, որ յուրաքանչյուրն իրեն կարողանա առաջնորդ պատկերացնել: Եվ պատահական չէ, որ դասավանդվող առարկաներից «Հայ ղեկավարը» կոչված է աշակերտին ճանաչելի դարձնել հայ ժողովրդի անցյալի ու ներկայի գիտության, մշակույթի, տեսական-քաղաքական երեւելի գործիչներին, որից ընտրված մեկ անհատի կյանքն ու գործունեությունը ուսումնասիրվում է ողջ տարվա ընթացքում:

Ուշադրության կենտրոնում, իհարկե, հայ եկեղեցու պատմություն առարկան է նաեւ, հայ եկեղեցու սրբերի, ծեսերի, տոների ճանաչողությունը, իսկ 5 տաղավար տոների նշելը պարտադիր է: Կրթօջախի միջոցառումների շրջանակներում ներառված «Ազգադրոշմի» արարողությունը, որ կատարվեց սեպտեմբերի 24-ին, իր տեսակով նորամուծություն է Հայաստանում եւ Հայ առաքելական եկեղեցու արարողակարգում: (Նյու Ջերսիի «Խրիմյան» ճեմարանում տարիների ավանդույթ ունի):



Արարողությունն, իսկապես, առանձնահատուկ է իր բնույթով, եւ կարելի է բնորոշել, որպես նոր ձեւավորվող քաղաքացու, հայ մարդու պատասխանատվության առաջին քայլ: Միջոցառմանը մասնակցեցին կրթօջախի միայն «Նարնջագույն» դասարանի սաները՝ ավագ դասարան փոխադրվելու եւ «Արարատ» անունը ստանալու համար: Արարողությունը կայացավ հանդիսավոր մթնոլորտում. հոգեւորականների եւ հյուրերի ներկայությամբ սաները երդման արարողություն կատարեցին՝ հայտնելով իրենց հավատարմության ուխտը՝ Հայ առաքելական եկեղեցուն, նրա դավանանքին, կանոններին, պատվիրաններին եւ ազգին ու հայրենիքին, որից հետո նրանք ստացան սրբազան հոր օրհնությունը եւ նրա կողմից հանձնված «Ազգադրոշմի» վկայագրերն ու «Ազգանշանները»: Արարողությունն ավարտվեց «Տերունական աղոթքով»:

Ապա ինչպես ընդունված սովորություն է, եղավ խրախճանքի անկաշկանդ, ուրախ ցերեկույթ:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

## Նորա Արմանիի նոր բեմադրությունը Նյու Յորքում

**Հոկտեմբերի 16-ին Նյու Յորքի «Տրայադ» թատրոնի լեփլեցուն դահլիճում տեղի է ունեցել հայտնի դերասանուհի եւ ռեժիսոր Նորա Արմանիի նոր բեմադրության առաջնախաղը, որն ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթում տպագրված Լինդա Լեւընսոնի գրախոսականի, այնքան հաջող է անցել, որ արժե մեկ-երկու առիթ եւս տալ հանդիսատեսին վայելելու այդ եզակի գործը: Խոսքը Անյես Ժաուի եւ Ժան Պիեռ Բաքրիի «Խոհանոցը եւ դրա ազդեցության տարածքները» կոմիկական պիեսի մասին է, որը թեեւ գրվել է 1991-ին եւ ֆիլմի վերածվել 1993-ին (ռեժիսոր՝ Ֆիլիպ Մույլ), սակայն մինչեւ օրս պահպանում է իր այժմեականությունը: Պիեսում հանդես են եկել Նյու Յորքում բնակվող ֆրանսիական դերասաններ Պասկա Ենփֆիստերը, Գաբրիել-Տիգրան Չիթրին, Սոֆի Լամպերը, Սենդի Պրենուան եւ Թոմաս Բոդուանը, որոնք հանդիսատեսի ուշադրությունը բեմին գամված են պահել սկզբից մինչեւ վերջ՝ ստեղծելով զվարճալի հաճելի մթնոլորտ: Օգտագործվել է Սերժ Գեյնբուրգի երաժշտությունը:**

**«Դժվար է եւ մեծ պատասխանատվություն արդեն բեմադրված եւ նույնիսկ ֆիլմի վերածված մի պիեսի անդրադառնալը: Կրկնվելու վտանգները չափազանց մեծ են: Փորձել եմ հավատարիմ մնալով հեղինակի գործին, զգուշությամբ առանց ավելորդությունների, ավելացնել իմ նրբերանգները», նշել է Արմանին գրախոսականի հեղինակին, որը «գերազանցորեն գրված եւ անթերի ռեժիսորական աշխատանքով բեմականացված պիես» է համարել ներկայացումը: Արմանին հանդես է եկել նաեւ որպես պրոդյուսեր: Բեմականացումը ֆրանսերեն լինելով հանդերձ, հուզել եւ հետաքրքրել է նաեւ ոչ ֆրանսախոս հանդիսատեսին:**

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

ՄՈՆՐԵԱԼ

## Հ. Հարություն վրդ. Պզտիկյանի դասախոսությունների շարքը Մոնրեալում

**Ինչպես Մոնրեալից են մեզ հաղորդում, ՀԲԸՄ «Մանուէլ Քէօսէեան» հայագիտական դասընթացների վերջին դասախոսությունների շարքն իրագործելու համար Փարիզից հատուկ հրավերով Մոնրեալ էր մեկնել Սամուել-Մուրատյան վարժարանի եւ Մշակութային կենտրոնի տնօրեն Հ. Հարություն վրդ. Պզտիկյանը, որը հոկտեմբերի 25-ից 28-ը հանդես եկավ հայ մշակույթին, հայ եկեղեցուն, Մխիթարյան միաբանությանը նվիրված հետաքրքրական բանախոսություններով՝ հանդիսականի համար ճանաչողական լայն նշանակությամբ: Բանախոսության յուրաքանչյուր թեման ներկայացվեց համապատասխան ֆիլմի ցուցադրությամբ: Առաջին օրվա նյութը «Մխիթարյան հայրերի նպաստը հայ մշակույթին» թեմայով, ուղեկցեց 30 րոպե տեւողությամբ տեսաֆիլմով՝ պատրաստված ֆրանսիական ազգային հեռուստատեսության պատվերով: Հ. վրդ. Պզտիկյանը ներկայացրեց հայ ժողովրդի համար դժվարին այդ ժամանակաշրջանը, հայ մտքի, մշակույթի ծանր վիճակը եւ այդ ֆոնին՝ Մխիթար Սեբաստացու սխրանքը՝ Վենետիկի Սբ Ղազար կղզում միաբանության հիմնադրումը, որը 3 հարյուրամյակ արդեն գիտակրթական-մշակութային բեղուն գործունեությամբ ահռելի ծառայություն է մատուցում հայ ժողովրդին ու նրա մշակույթին:**

**Հաջորդ օրվա բանախոսության՝ «Միջնադարյան Հայաստանի վանքերն ու վարդապետները» թեման, նույնպես ուղեկցվեց հայ հոգեւոր ճարտարապետությանը նվիրված ֆիլմաշարի (այս անգամ հեղինակի միջոցներով նկարահանած) ցուցադրությամբ եւ մեկնաբանական տեքստով: Բովանդակությամբ եւ տեղեկություններով հարուստ էր նաեւ դրան հաջորդած մեկ այլ բանախոսություն՝ «Պատմություն հայկական տպագրության», որի մանրամասների մեջ, ինչպես եւ նախորդին հմուտ վարդապետ Պզտիկյանը, հանգամանորեն, առանձին շրջաններով անդրադարձավ հայ տպագրության արվեստին՝ սկսած Վենետիկում Հակոբ Մեղապարտի ջանքերով 1512-ին լույս տեսած «Ուրբաթագրքից» եւ դրա հետագա ընթացքից: Դասախոսությունների շարքը եզրափակվեց բռնի իսլամացած հայերի եւ առկա հանգամանքների մասին ուշագրավ տեղեկություններով հագեցված ելույթով: Վրդ. Պզտիկյանը այցելեց տեղի ամենօրյա երեք հայկական վարժարաններ եւ առաջնորդարաններ, որտեղ հանդիպումներ ունեցավ նաեւ իր նախկին սաների հետ:**

Մ. Բ.

## «Ես երգում եմ սիրուն երգեր»

### «Սիրուն» երգեր՝ Մարզահամերգային համալիրում

**Միացյալ Նահանգներում բնակվող երգիչ Հարութ Բալյանը հիմա Հայաստանում է: Երեկ նա «Հայելի» ակումբի հյուրն էր: Ասում է ԱՄՆ տեղափոխվել է 10 տարեկանում, 21 տարի է ապրում է այնտեղ. «Ուրախ եմ, որ իմ ժողովուրդն ինձ գնահատում է», նշեց երգիչը: Տպավորությունն այնպիսին է, որ Հարութ Բալյանն իրեն սիրված ու ճանաչված աստղ է համարում, բայց մինչեւ նրա համերգը գովազդող տեսահոլովակների երեւան գալը շատերս նրա մասին ո՛չ լսել էինք, ո՛չ էլ պատկերացնում էինք, որ Միացյալ Նահանգներում հայտնի հայ երգիչ է ապրում, որի երազանքը Հայաստանում մենահամերգ ունենալն է: Հարութ Բալյանի երազանքն այսօր կատարվելու է. երեկոյան ժամը 19.00-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում Հայաստանում առաջին անգամ մենահամերգով հանդես կգա Հարութ Բալյանը: Իսկ թե ի՞նչ է երգում Հ. Բալյանը, լրագրողներն ուզեցին, որ այդ հարցին երգիչը պատասխանի: «Ավելի շատ ինձ տեսնում եմ ժողովրդի ոճի մեջ: Կոնկրետ իմ մակարդակը ժողովրդի մակարդակն է: Ես սիրուն երգեր եմ երգում», ասաց Հ. Բալյանը: Այսպիսի պատասխանից հետո ի՞նչ ոճի երգիչ համարենք Հարութին... Երբ անճաշակություն, կամ ինչպես ժողովուրդն է ասում՝ ռաբիս երգողներին հարցնում են, թե ի՞նչ ոճով եք երգում, նրանք պատասխանում են՝ մոտավորապես Հարութ Բալյանի նման: «Ես երգում եմ իմ ժողովրդի համար, երգում եմ մաքուր, զուլալ: Դրանք հոգուցս ու տրտիցս դուրս եկած երգեր են», ասաց երգիչը:**




**Երեկվա ասուլիսը սովորականից ուրախ անցավ, սակայն ոչ թե «հանրահայտ» երգչի, այլեւ ԱՄՆ-ից Հայաստան եկած երգչուհի Շիմայի շնորհիվ: Ասուլիսին ներկա էր նաեւ Շիման: Երգչուհին այսօրվա համերգի ժամանակ երգելու է Հարութ Բալյանի հետ: Նրանք միասին ձայնագրած զուգերգ ունեն: Զուգերգի ամբողջ հմայքն այն է, որ սեւամորթ աղջիկը հայերեն է երգում: Որ Շիմա անունով երգչուհի կա, այդ մասին էլ նոր ենք իմանում: Պարզվում է՝ Հարութ Բալյանի շնորհիվ Շիման ճանաչվում է ոչ միայն Հայաստանում, այլեւ ԱՄՆ-ում: «Դե ես արդեն 10 տարի է երգում եմ, զուգերգը ճանաչվածություն ավելի շատ Շիմային բերեց», ավելացրեց Հարութ Բալյանը: Կատակը մի կողմ, փաստորեն, անհայտ Հարութ Բալյանի հետ երգելով հնարավոր է հայտնի դառնալ: Շիման Հայաստան էր ժամանել երեկ, համերգից հետո մեկնելու է Նյու Յորք, որը նրա մշտական բնակության վայրն է: Հայաստանում ընդամենը մի քանի ժամ մնալով՝ Շիման արդեն ասում էր. «Այստեղ ինձ զգում եմ ինչպես իմ ընտանիքում»: Շիման ծանոթացավ ներկա բոլոր լրագրողների հետ, մի քանի անգամ կրկնեց մեր անունները, հետո երգեց հայերեն: Ըստ Շիմայի՝ հայ աղջիկները շատ գեղեցիկ են: Պարզվեց, որ Հայաստանի ու հայ ժողովրդի մասին Շիման գրեթե ոչինչ չգիտի, բայց դա չէր խանգարում նրան, որպեսզի իրեն սեփական տանը զգար: Խոսելով համագործակցությունների մասին՝ Հարութ Բալյանն ասաց, որ հետագայում արդեն աշխարհահռչակ երգչուհու հետ է երգելու: Ըստ պլանների՝ եկող տարի զուգերգը պատրաստ կլինի: Թե ո՞վ է աշխարհահռչակ երգչուհին, Հարութ Բալյանը, չգիտես ինչու, որոշեց գաղտնի պահել, երեւի թե այն պատճառով, որ աչքով չտանք կամ էլ... Անդրադառնալով շոու բիզնեսի խաղի կանոններին, Հ. Բալյանը նշեց, որ Հայաստանի ու ԱՄՆ-ի շոու բիզնեսի կանոնները շատ են տարբերվում իրարից. «Այնտեղ ավելի պրոֆեսիոնալ են: Շատ մանրուքներ կան, որոնք թվարկելը երկար կտեւի»: Վերջում երգիչը լրագրողներին ասաց, թե ինչ է մտածում հայ երգիչ-երգչուհիների մասին. «Որեւէ մեկին «անուն դնել» չեմ սիրում: Ամեն մարդ ինքը գիտի այս կյանքում ինչն է ճիշտ անում, ինչը սխալ»:**

Ի. Պ.

# Մարզական

## ԱՊՀ եւ Բալթյան երկրների ԱՕԿ-ների տարածաշրջանային ֆորումը Հայաստանում

Երէկ Երեւանում մեկնարկեց ԱՊՀ եւ Բալթյան երկրների օլիմպիական կոմիտեների տարածաշրջանային ֆորումը: Արդեն 2-րդ անգամն է, ինչ ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանի հրավերով այդ հեղինակավոր միջոցառումը հյուրընկալում են Հայաստանում: Մինչ ֆորումի բացումը, տեղի ունեցավ «Օլիմպիական Հայաստան» գրքի շնորհանդեսը, որը լույս է տեսել ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանի նախաձեռնությամբ եւ հեղինակությամբ: Այս արժեքավոր աշխատության մեջ ներկայացված են ինչպես հայ մարզիկների օլիմպիական նվաճումները, այնպես էլ միջազգային օլիմպիական շարժման մեջ հայազգի ներկայացուցիչների ունեցած դերակատարումը:




Ողջունելով ֆորումի մասնակիցներին, ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանը կարեւորեց նմանատիպ միջոցառումների անցկացումը: «Մենք միշտ ուրախ ենք Հայաստանի հյուրընկալ հողում ողջունելու Ձեզ: Նմանօրինակ միջոցառումները մեծ կարեւորություն ունեն մեզ համար, քանի որ հնարավորություն են տալիս ծանոթանալ այլ երկրների օլիմպիական կոմիտեների աշխատանքներին, նպաստում փոխադարձ կապերի ամրապնդմանն ու փորձի փոխանակմանը», իր խոսքում նշեց ՀԱՕԿ-ի նախագահը:

Քննարկման շրջանակներում ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Չարլզ Լոնսդեյլը ներկայացրեց 2012-ին Լոնդոնում կայանալիք 30-րդ ամառային օլիմպիական խաղերի նախապատրաստման աշխատանքները: Նմանատիպ զեկուցումով հանդես եկան նաեւ 2014-ի Սոչիի ձմեռային օլիմպիական խաղերի կազմկոմիտեի ներկայացուցիչները:

Ֆորումի օտարերկրյա մասնակիցների համոզմամբ, 20-ամյա կենսագրություն ունեցող Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն այլեւս կայացած կառույց է, որի հետ հաշվի են նստում աշխարհի բոլոր երկրների մարզական կառույցները: Իսկ այդ համբավն ու հեղինակությունը ձեռք են բերվել երկարամյա համառ ու հետեւողական աշխատանքի արդյունքում, որի լավագույն գնահատականը մեր մարզիկների փայլուն ելույթներն են միջազգային խոշորագույն մարզական ստուգատեսներում:

## Պակյաոն մտադիր չէ թողնել ռինգը




Այսօր ԱՄՆ-ի Տեխասի նահանգի Առլինգթոն քաղաքում կկայանա մեծ հետաքրքրություն ներկայացնող բռնցքամարտի մենամարտ աշխարհի լավագույն բռնցքամարտիկներից մեկի՝ ֆիլիպինցի Մեննի Պակյաոյի եւ կիսամիջինքաշային կարգի աշխարհի նախկին եռակի չեմպիոն, մեքսիկացի Անտոնիո Մարգարիտոյի միջեւ:

Նախօրեին լրագրողների հետ հանդիպման ժամանակ Մեննի Պակյաոն հայտարարել է, որ չի պատրաստվում Մարգարիտոյի հետ մենամարտից հետո ավարտել ելույթները: Նույնիսկ եթե չկայանա իր մենամարտը Ֆլոյդ Մեյվեզերի հետ, ֆիլիպինցի բռնցքամարտիկը մտադիր է եւս 2-3 մենամարտ անցկացնել: Նրա պրոմոութեր Բոբ Արումն էլ տեղեկացրել է, որ Պակյաոյի հետ զրույցներից եկել է այն եզրակացության, որ վերջինս դեռեւս 2 տարի էլ կշարունակի ռինգ դուրս գալ:

Մեննի Պակյաոն 32 տարեկան է: Պրոֆեսիոնալ ռինգում նա 56 մենամարտ է անցկացրել, որոնցից 51-ում հաղթել է, 2-ն ավարտել է ոչ-ոքի, 3-ում պարտվել է: Անտոնիո Մարգարիտոն եւս 32 տարեկան է, անցկացրած 44 մենամարտերից շահել է 38-ը, 6-ում պարտվել է:

## Հայկական «Ռեգբիի» բարձրացող «աստղը» 16-ամեայ Սասուն-Տիգրան Մոսկոֆեան

«Ռեգբին», որ «տղամարդոց մարզաձեւը» կը նկատուի շատերու կողմէ, վերջին շրջանին հետաքրքրութիւն ստեղծած է նաեւ Հայաստանի մէջ, որուն ազգային հաւաքականի «հայրերը» եղած են ֆրանսահայերը: «Ռեգբիի» ամենէն նշանաւոր ակումբը եղած է Սփիւռքի համար Կալկաթայի հայկական ակումբը, որ բազմիցս շահած է Բենգալի նահանգի ախոյեանութիւնը, որուն շարքերէն յատկապէս փայլած է հնդկական «Ռեգբիի» հայազգի «աստղ» Արշամ Սուքիասը:

Սասուն Մոսկոֆեանի անունը հայկական մարզական շրջանակները շատ պիտի լսեն յետագայ տարիներուն: 16-ամեայ տաղանդաւոր մարզիկը Անգլիոյ «Ռեգբի»ի ֆետերասիոնի անդամ է, եզրային յարձակող՝ Հերթֆորթշայրի գաւառի Old Albanian խումբին, միաժամանակ ըլլալով բազմաթիւ գաւաթներ ու մրցանակներ ստացած Հերթֆորթշայրի «Ռեգբի»ի դպրոցի խումբին խմբապետը եւ գաւառի հաւաքականին փոխ-խմբապետը: «Ռեգբի»-ի դպրոցը կը հրաւիրէ շրջանի ամենէն տաղանդաւոր մարզիկները՝ ապագային զիրենք ուղարկելու Անգլիոյ լաւագոյն ակումբներ:

1 մեթր 78 սմ. հասակով եւ 74 քլկ. կշռող այս պատանի «հսկան», զաւակն է Հայաստանի ճարտարագիտական համալսարանի շրջանաւարտ Վարդան Մոսկոֆեանի եւ իրաւաբան Շողիկ Որբերեանի: Իր նպատակն է խաղալ Հայաստանի ազգային հավաքականի շարքերէն: Այս երազը իրականացնելու համար արդէն դիմում կատարած է Հայաստանի «Ռեգբի»-ի ֆետերասիոնին, որուն շարքերէն ելոյթ կ'ունենան սփիւռքահայ բազմաթիւ մարզիկներ: Ճիշդ է որ այսօր դժուար է մրցիլ Բրիտանիոյ, Ֆրանսայի, Աւստրալիոյ ու Նոր Զելանտայի նման ահարկու հաւաքականներուն դէմ, սակայն այս խիզախներու մարզաձեւը արդէն իսկ բաւականին ժողովրդականութիւն սկսած է վայելել ոչ միայն հնդկահայութեան եւ ֆրանսահայութեան մօտ, այլեւ Հայաստանի մէջ: Բաւականին «արիւնալի» խաղաձեւ մը, սեխաձեւ գնդակով, որուն աստղերը ոչ պակաս ժողովրդական են, քան ֆութպոլի կուռքերը:

Լոնտոնի մէջ ծնած Սասուն-Տիգրան Մոսկոֆեան փոքր տարիքէն արտակարգօրէն աշխոյժ, բնածին մարզիկ է, «Ռեգբիի» բարձրացող աստղ, որ իր ծննդավայրին եւ մայր հայրենիքի յոյսերէն մէկը կրնայ ըլլալ:

**Հ. ՄՈՍԿՈՖԵԱՆ**
**Լոնտոն-Պէյրութ**

## Լավագույն ությակը որոշվեց

Թենիսի Փարիզի մրցաշարում հայտնի դարձան քառորդ եզրափակիչի մասնակիցները: Ռոջեր Ֆեդերերը 6-3, 6-3 հաշվով պարտության մատնեց Ռադեկ Շտեպանեկին: Պայքարը շարունակում է նաեւ Նիկոլայ Դավիդենկոն, որն առավելության հասավ Թոմաշ Բերդիխի նկատմամբ (4-6, 7-6, 6-0): Քառորդ եզրափակիչ են մտել նաեւ Յուրգեն Մելցերը, Էնդի Մարեյը, Գայել Մոնֆիսը, Էնդի Ռոդիկը, Ռոբին Սոդերլինգն ու Միխայել Լլոդրան:

Հերթական հանդիպումներից հետո որոշվեցին Լոնդոնում կայանալիք թենիսիստների եզրափակիչ մրցաշարի բոլոր 8 մասնակիցները: Նախապես ուղեգրեր նվաճած Ռաֆայել Նադալին, Ռոջեր Ֆեդերերին, Նովակ Ջոկովիչին, Էնդի Մարեյին եւ Ռոբին Սոդերլինգին միացան Թոմաշ Բերդիխը, Դավիթ Ֆեռերն ու Էնդի Ռոդիկը:

Ю²КШ²о

## Մրցաշարում եռիշխանություն հաստատվեց

Միխայիլ Տալի հուշամրցաշարի 7-րդ տուրում Լեւոն Արոնյանը սպիտակներով 60-րդ քայլին հաշտություն կնքեց ճապոնացի Հիկարու Նակամուրայի հետ: Ոչ-ոքի ավարտվեցին նաեւ Կրամնիկ-Մամեդյարով, Էլյանով-Կարյակին, Գրիշչուկ-Շիրով պարտիաները: Միակ հաղթանակը Գելֆանդի նկատմամբ տոնեց Վան Հաոն:

7-րդ տուրից հետո մրցաշարում եռիշխանություն հաստատվեց: 4,5-ական միավորով աղյուսակը գլխավորում են Արոնյանը, Վան Հաոն եւ Մամեդյարովը: 4-ական միավորով նրանց հետապնդում են Սերգեյ Կարյակինը, Հիկարու Նակամուրան եւ Ալեքսանդր Գրիշչուկը:

Ավարտական երկու տուրերում Արոնյանը կմրցի Գրիշչուկի եւ Էլյանովի հետ:

## Անդրեասյանը մտավ կիսաեզրափակիչ

Շախմատի Ռուսաստանի գավաթի խաղարկության քառորդ եզրափակիչի 2-րդ պարտիայում հաջողությամբ իրացնելով 2 զինվորի առավելությունը, Զավեն Անդրեասյանը սպիտակներով հաղթեց ռուսաստանցի գրոսմայստեր Սանան Սյուգիրովին ու մտավ կիսաեզրափակիչ:

Պայքարը կշարունակեն նաեւ Արտյոմ Տիմոֆեեւը, Իլդար Խայրուլլինը եւ Վլադիմիր Պոտկինը: Տիմոֆեեւը 2-րդ պարտիայում էլ հաղթեց Պավել Սմիռնովին, Պոտկինն էլ առաջին պարտիայում հաշտություն կնքելուց հետո 2-րդում պարտության մատնեց Ֆարուխ Ամոնատովին: Իսկ ահա Վադիմ Զվյագինցեւի եւ Իլդար Խայրուլլինի մրցավեճի ելքը վճռվեց լրացուցիչ մրցախաղում: 3-2 հաշվով հաղթանակ տարավ Խայրուլլինը:

Կանանց եզրափակիչ մրցախաղի 2-րդ պարտիայում Իրինա Տուրովան ռեւանշի հասավ Բայրա Կովանովայից կրած պարտության դիմաց: Գավաթի բախտը վճռվեց լրացուցիչ մրցախաղում: Հաջողությունն ուղեկցեց Իրինա Տուրովային, որը հաղթեց 3-2 հաշվով:

## «Փյունի՞կը», թե՞ «Բանանցը»

Այս հարցի պատասխանը կտրվի նոյեմբերի 14-ին, երբ վերջնագիծը կհատի ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի 19-րդ առաջնությունը: 2001-ից սկսած սովորաբար փյունիկցիները մշտապես ժամկետից շուտ պաշտոնապես գրանցում էին իրենց չեմպիոնությունը՝ գործը չթողնելով ավարտական տուրին: Բացառություն էր միայն 2008-ի առաջնությունը, երբ փյունիկցիներին լուրջ դիմադրություն ցույց տվեց «Արարատը», որին մարզում էր Վարուժան Սուքիասյանը: Այդ տարի արարատցիներն առաջնության ընթացքում բավական առաջ էին անցել փյունիկցիներից, սակայն հետագայում թիմը «սայթաքեց» ու հնարավորություն տվեց չեմպիոնին գլխավորելու աղյուսակը: Հանգուցալուծումը տեղի ունեցավ առաջնության ավարտական տուրում: «Արարատը» 1-0 հաշվով հաղթեց «Փյունիկին» եւ միավորներով հավասարվեց մրցակցին: Հայաստանի առաջնությունների պատմության մեջ առաջին անգամ չեմպիոնին որոշեց «ոսկե» խաղը, որում 2-1 հաշվով հաղթեց «Փյունիկը»:




Ընթացիկ առաջնությունում թեեւ «ոսկե» խաղի անցկացումն արդեն բացառվում է, սակայն նման խաղ կարելի էր որակել 26-րդ տուրում կայացած «Փյունիկ»-«Բանանց» հանդիպումը: Վերջին վայրկյաններին Կառլեն Մկրտչյանի խփած գոլի շնորհիվ հաղթելով, «Փյունիկը» մեկ միավորով առաջ անցավ «Բանանցից»: Այդ խաղն էլ գործնականում վճռեց ոսկե մեդալների հարցը հօգուտ «Փյունիկի»:

Ճիշտ է, առաջնության ավարտին դեռ մեկ տուր կա, սակայն դժվար թե գտնվի մեկը, ով հավատա, որ «Փյունիկն» ավարտական տուրում չկարողանա հաղթել «Կիլիկիային»: Այնպես որ նոյեմբերի 14-ին «Փյունիկը» հերթական շնորհավորանքները կընդունի 10-րդ անընդմեջ չեմպիոնության առիթով:

«Բանանցն» Իջեւանում մրցելու է «Շիրակի» հետ: Վերջինս այլեւս չի կարող խուսափել վերջին տեղից, իսկ ահա «Բանանցի» համար խաղը կարեւոր է այն հույսով, թե գուցե «Փյունիկը» կսայթաքի «Կիլիկիայի» հետ մրցավեճում:

Տուրի մյուս երկու խաղերն այլեւս ոչ մի նշանակություն չունեն: «Ուլիսն» արդեն իր համար ապահովել է բրոնզե մեդալները, իսկ մյուս թիմերը հաստատվել են 4-8-րդ տեղերում եւ ոչ մի տեղաշարժ նրանց չի սպառնում:

## «Համագործակցության գավաթը» կխաղարկվի Սանկտ Պետերբուրգում

Ֆուտբոլի ԱՊՀ երկրների «Համագործակցության գավաթի» հերթական խաղարկությունը կանցկացվի հունվարի 14-23-ը Սանկտ Պետերբուրգում: Այս քաղաքում արդեն 2-րդ անգամ է նման մրցաշար անցկացվելու: Առաջին անգամ Սանկտ Պետերբուրգը մրցաշարի մասնակիցներին հյուրընկալել էր 2008-ին: Բացի ԱՊՀ երկրների թիմերից, մրցաշարին կմասնակցի նաեւ ֆիննական ակումբներից մեկը:

Վերջին տարիներին «Համագործակցության գավաթի» խաղարկության հեղինակությունը զգալիորեն նվազել է: Շատ երկրների չեմպիոններ ու նույնիսկ մրցանակակիրներ հրաժարվում են մրցաշարի մասնակցությունից տարբեր պատճառաբանությամբ: Անցյալ տարի «Փյունիկը» Մոսկվայում հանդես եկավ ամբողջությամբ դրսից հրավիրված ֆուտբոլիստներով՝ հնարավորություն ընձեռելով նրանց փորձարկելու ուժերը: Առայժմ հայտնի չէ, թե այս անգամ մեր հանրապետությունը ո՞ր ակումբը կներկայացնի «Համագործակցության գավաթի» մրցաշարում:

*էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ

# Օրվա հետքերով

## ԹՄՄ ամենամյա մրցանակաբաշխություն

### ՀԹՄՄ-ն հայտարարում է «Վահան Թեքեյան» ամենամյա մրցանակաբաշխություն հետեւյալ անվանակարգերում

1. Գեղարվեստական գրականություն (ԱՄՆ եւ Կանադայի ԹՄՄ «Ազատի Շաքե Ղազարյան» հիմնադրամ)
2. Երաժշտություն (ԱՄՆ եւ Կանադայի ԹՄՄ «Ազատի Շաքե Ղազարյան» հիմնադրամ)
3. Գեղանկարչություն (ԱՄՆ եւ Կանադայի ԹՄՄ «Ազատի Շաքե Ղազարյան» հիմնադրամ)
4. Ռադիո եւ հեռուստատեսություն (ԱՄՆ եւ Կանադայի ԹՄՄ «Ազատի Շաքե Ղազարյան» հիմնադրամ)
5. «**Ազգ**» օրաթերթում լավագույն հրապարակման համար («Հակոբ Վարդիվառյան» մրցանակ)
6. Դպրոցականների եւ մանուկների համար գրված ստեղծագործությունների համար «Արա-Մարալ» մրցանակ. սահմանված է Սիլվա Տեր-Ստեփանյանի (Նյու-Յորք) կողմից
7. Սոցիալ-քաղաքական երգիծանքի համար «Դավիթի պարսատիկեն» մրցանակ. սահմանված է Իռմա Տեր-Ստեփանյանի (Նյու-Յորք) կողմից
8. Քանդակագործություն («Բաբկեն եւ Անահիս Մկրյան ընտանիք» հիմնադրամի մրցանակ)
9. Թատրոն («Բաբկեն եւ Անահիս Մկրյան ընտանիք» հիմնադրամի մրցանակ)

Նշյալ մրցանակներից յուրաքանչյուրին արժանացած անհատը կամ խումբը կստանա համապատասխան դիպլոմ եւ դրամական պարգեւ:

- Մրցանակների հավակնելու իրավունք ունեն ստեղծագործողներ ինչպես Հայաստանից, այնպես էլ Սփյուռքից:
- Մրցանակաբաշխությանը կարող են ներկայացվել 2009 թվականին ստեղծված աշխատանքները:
- Մրցույթին իրավունք ունեն գործեր ներկայացնել Հայաստանի ստեղծագործական միությունները, ՀՀ նախարարությունները, ՀՀ ԳԱ ակադեմիան, բարձրագույն ուսումնական հաստատությունները, հասարակական կազմակերպությունները, հրատարակչությունները, զանգվածային լրատվության միջոցները, սփյուռքահայ կազմակերպությունները:
- Մրցույթին չեն կարող աշխատանքներ ներկայացնել ՀԹՄՄ կենտրոնական վարչության եւ մրցանակներ շնորհող հանձնաժողովի անդամները:
- Գործերն ընդունվում են ներկայացնող կազմակերպության պաշտոնական երաշխավորությամբ՝ հաստատված կնիքով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

**ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Արարատի մարզի Նարեկ համայնքում հողի վարձակալ Գառնուշ Հակոբյանի՝ ոռոգման նպատակով Վեդի գետ թափվող սելավատարից 15,4 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:**

**Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):**

**Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. նոյեմբերի 19-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:**

**ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

**ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Արարատի մարզի Նարեկ համայնքի վարչական տարածքում գործող «Գեղեցիկ Նարեկ» Ա/Կ-ի՝ ոռոգման նպատակով Վեդի գետ թափվող հեղեղատներից 22 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:**

**Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):**

**Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. նոյեմբերի 19-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:**

**ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի դեսպանատունը եւ Հյուպատոսական ծառայությունը ս.թ. նոյեմբերի 15-ից տեղափոխվում են ք. Երեւան, Բաբայան փ. 2/10 հասցե: Դեսպանատան հեռախոսահամարներն են՝ **20-07-35, 20-07-36, 20-07-38, 20-07-42:**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի նոյեմբերի 18-ին, ժամը 12:00–ին տեղի կունենա «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված «Արզնի-Երևան» ջրամատակարարման համակարգի վերանորոգման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ:

**Տեղեկությունների համար դիմել՝ ք.Երևան Կոմիտաս 29: Հեռ. 22-14-85, 22-15-68, 22-02-18**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի նոյեմբերի 19-ին, ժամը 12:00–ին ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի գյուղապետարանում տեղի կունենա «Գյումրի-ՀԱՑ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գ.Աշոցք, 2-րդ թաղամասում, թիվ 26/1 հասցեում նախատեսվող ԱԳԼՃԿ-ի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ:

**Տեղեկությունների համար դիմել՝ ք.Երևան Կոմիտաս 29: Հեռ. 22-14-85, 22-15-68, 22-02-18**

Ռիելտոր <<Ֆլորես>> Աճուրդի Տուն ՍՊԸ-ն <<Ակսոն>> ԱՀԲ ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է Կարեն Ավետիսյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող ք. Երեւան, Նոր-Նորք 6 մկր, 43 շենք (Լյուքսեմբուրգի 2 նրբ.6շ.), բն. 34 հասցեում գտնվող 73,34 քմ ընդ. մակերեսով բնակարանի 1/5 մասի սեփականության իրավունքի աճուրդային վաճառքը: Մեկն. գինը՝ 1800000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական եղանակով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 29.11.2010թ-ից մինչեւ 29.12.2010թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Բնակարանը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուրաքանչյուր օր ժամը 11.00-ից – 20.00-ն: Աճուրդի մասնակիցները՝ ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ.ռեգիստրի վկայականի պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնային առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-45-13 կամ այցելել www.akson.am

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հայինկասացիա» փակ բաժնետիրական ընկերությունը հայտարարում է հրապարակային մրցույթ՝ «Հայինկասացիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից «B3+», «B4+» պաշտպանության ինկասացիոն զրահապատ տրանսպորտային միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել այն անձինք (այսուհետեւ՝ Մասնակից), որոնք ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական որակավորում, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ, նյութական եւ աշխատանքային ռեսուրսներ:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել «Հայինկասացիա» ՓԲԸ, ք. Երեւան, Դ. Անհաղթի 3 հասցեում:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետը՝ 2010 թ. դեկտեմբերի 17-ին, ժամը 17.00-ին:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամը՝ 2010 թ. դեկտեմբերի 21-ին, ժամը 17.00-ին՝ «Հայինկասացիա» ՓԲԸ, ք. Երեւան, Դ. Անհաղթի 3 հասցեում:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2010 թ. դեկտեմբերի 24-ին, ժամը 17.00-ին՝ «Հայինկասացիա» ՓԲԸ, ք. Երեւան, Դ. Անհաղթի 3 հասցեում:

Մրցույթին մասնակցելու հրապարակային ծանուցումը հրապարակված է www.yell.am եւ www.Incasso.info.am ինտերնետային կայքերում: Մրցույթին մասնակցելու հրապարակային ծանուցումը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել «Հայինկասացիա» ՓԲԸ, հեռ.՝ 28-15-00:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հայինկասացիա» փակ բաժնետիրական ընկերությունը հայտարարում է հրապարակային մրցույթ՝ «Հայինկասացիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից ավտոպահեստամասեր ձեռք բերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել այն անձինք (այսուհետեւ՝ Մասնակից), որոնք ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական որակավորում, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ, նյութական եւ աշխատանքային ռեսուրսներ:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել «Հայինկասացիա» ՓԲԸ ք. Երեւան, Դ. Անհաղթի 3 հասցեում:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետը՝ 2010 թ. դեկտեմբերի 17-ին, ժամը 17.00-ն:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամը՝ 2010 թ. դեկտեմբերի 21-ին, ժամը 14.00-ն՝ «Հայինկասացիա» ՓԲԸ, ք. Երեւան, Դ. Անհաղթի 3 հասցեում:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2010 թ. դեկտեմբերի 24-ին, ժամը 14.00-ն՝ «Հայինկասացիա» ՓԲԸ, ք. Երեւան, Դ. Անհաղթի 3 հասցեում:

Մրցույթին մասնակցելու հրապարակային ծանուցումը հրապարակված է www.yell.am եւ www.Incasso.info.am ինտերնետային կայքերում: Մրցույթին մասնակցելու հրապարակային ծանուցումը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել «Հայինկասացիա» ՓԲԸ, հեռ. 28-15-00:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Ռուսաստանի Դաշնությունում 2011թ. հրատարակվող թերթեր, ամսագրեր և այլ պարբերականներ ձեռքբերելու նպատակով բաժանորդագրող (մատակարարող) կազմակերպություն ընտրելու համար բաց մրցույթի կազմակերպման մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է բաց մրցույթ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Ռուսաստանի Դաշնությունում 2011թ. հրատարակվող թերթեր, ամսագրեր և այլ պարբերականներ ձեռքբերման նպատակով բաժանորդագրություն իրականացնող կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել իրավաբանական անձինք (այսուհետ՝ Մասնակից), որոնք ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական որակավորում, տեխնիկական և ֆինանսական միջոցներ, նյութական և աշխատանքային ռեսուրսներ:

Մրցութային առաջարկություններն անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6:

Մրցութային առաջարկությունների ընդունման վերջին ժամկետն է 2010թ. դեկտեմբերի 13-ը, ժամը 16:00-ն:

Մրցույթի առաջարկությունների (հայտերի) բացման օրն ու ժամը 2010թ. դեկտեմբերի 13-ին, ժամը 16:00-ն:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2010թ. դեկտեմբերի 17-ին, ժամը 16:00-ն:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am):

Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար, ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործերի կառավարչություն, հեռ. 59-28-05, 59-28-02, ներքին 18-02, 18-05:

**ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն**

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետությունում 2011թ. հրատարակվող թերթերի, ամսագրերի եւ այլ պարբերականների ձեռքբերման նպատակով բաժանորդագրող (մատակարարող) կազմակերպություն ընտրելու համար բաց մրցույթի կազմակերպման մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է բաց մրցույթ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետությունում 2011թ. հրատարակվող թերթերի ձեռքբերման նպատակով բաժանորդագրություն իրականացնող կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձինք, որոնք ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Մրցութային առաջարկություններն անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6:

Մրցութային առաջարկությունների ընդունման վերջին ժամկետն է 2010թ. դեկտեմբերի 13-ը, ժամը 16:00-ն:

Մրցույթի առաջարկությունների (հայտերի) բացման օրն ու ժամն է 2010թ. դեկտեմբերի 13-ը, ժամը 16:00-ն:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2010թ. դեկտեմբերի 17-ին, ժամը 16:00-ն:

\Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am):

\Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար, ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործերի կառավարչություն, հեռ. 59-28-05, 59-28-02, ներքին 18-02, 18-05:

**ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն**




ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 12.11.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: